

# ԿՈՎԿԱՍԻ ՏԵՂԸ

## ՃԵՂԸ-ՃՈՎԻԹՈՒԹԻՆՆ ԳՈՏԳՈՒԹԻՆՆ ԻՆՔ

Անգրիկական գերեզմաններում գտնուած բրոնզեայ գար-  
գարուն գոտիներն առաւելագէտ 'ի նկատի առած:

**Ռ. ՎԻՐԻՌՎ.**




(ՆՈՒՅՐ ԼՆԻՑՆ ԵՐԵՎԱՆԵԱՆ)

### ԿԵՆՍԱԿՐԵԿՈՆ ԳՅԵՐ

«Ազգագրական Հանդիսի» ներկայ համարում գեան-  
դելով Վիրիսովի վերոյիշեալ ուսումնասիրութեան ազատ  
թարգմանութիւնը, անյորդ շինք համարում այդ հոշակա-  
տը գիտնականի մասին մի քանի կենսագրական տեղեկու-  
թիւններ եւ հաղորդել:

Դարաւ երկրորդ կիսի ամենահոշակաւոր գիտնական-  
ներեց մէկը՝ գերմանացի Ռուդոլֆ Վիրիսովը ծնուել է  
1821 թ. հոկտեմբերի 13-ին Պոմերանիայի Շիֆելցայն  
փոքրիկ քաղաքում: Բերլինի Փրիւզսիւ-Վիլհելմեան բժշկա-  
կան ինստիտուտում 1843 թ. դասընթացն աւարտելուց յե-  
տոյ, Վիրիսովը նոյն քաղաքի Օուրտն հիանդանոցի սկզբում  
աստիտենտ եւ յետոյ կառավարիչ է նշանակուում: 1847  
թ. նա իրաւունք է ստանում Բերլինի համալսարանում  
դասախօսելու եւ Բայնրարդ գիտնականի ընկերակցութեամբ



գրված

Քանդակող արքայազն

ՊՐՈՒ. Բ. ՎԻՐՉՈՎ  
PROF. R. VIRCHOW

„Եզրագրական Կենդան, Ա. Տարժ, Ա. Պոլոս:

հրատարակում է «Archiv für Pathol. Anatomie u. Physiologie u. für klin. Medicin» հանդեսը, որ գիտնական աշխարհում մինչև վերջին տարիներս համաշխարհային հռչակ է վայելում: Այդ հանդեսում հռչակատը գիտնական Վիրխովը մտա 200 յոդուած ոմնի, որոնց վերաբերում են գլխատրապէս դարտա երկրորդ կիսի բժշկական նորագոյն գիտերին: 1848 թ. նրան ուղարկել են Վերին Շլեզիայում տարածուած տիֆ հիանդութեան պատճառներն ուսումնասիրելու: Նրա այդ հիանդութեան գիտնական ուսումնասիրութիւնը լոյս է տեսել իւր խմբագրութեամբ հրատարակուող «Վիրխովեան արխիւում»: Այդ ուսումնասիրութեան հետ նա նոյնպէս 1848 թ. հոգով քաղաքական գաղափարներ է խառնել: Պրուսիայի կառավարութիւնը դէպի Վիրխովը լաւ շէր տըրամաւարած, որովհետեւ նա իւր ժամանակի բեֆորմատորական շարժումներին ժամակցում էր: Նա ստիպուած էր Վիրցբուրգի համալսարանում ախտաբանական կազմախօսութեան (Pathologische Anatomie) կաֆեդրա ձեռք բերել: Այնտեղ նա մեծ հռչակ ստացաւ. 1856 թ. հրահրուեց Բերլին կազմախօսութեան (Anatomie), ախտաբանութեան եւ հիանդատածութեան (Therapie) ուսուցչապետ: Բերլինի համալսարանում այն ժամանակից սկսած մինչև այժմս էլ դասախօսում է: 1891 թ. գիտնական աշխարհը փառաւոր կերպով տունեց տիեզերահռչակ այդ մեծ մարդու 70-ամնայ յոցելանը: Վիրխովն ախտաբանութեան արագին գիտնական ծառայութիւններ է մատուցել: Նա իրքեւ ախտաբան, կազմախօս եւ մանուսանդ հիստաածաքան շատ հիանդութիւնների հիստաածաքանական քնախօսական պատճառներն է գտել: Իրքեւ մարդաքան Վիրխովը զանազան ցեղերի կազմախօսական առանձնայատկութիւններն է որոշել: Նրա ամենամշանաւոր աշխատութիւններն հետեւեալներն են. «Gesammelte Abhandlungen zur wissenschaftlichen Medicin» (1856), «Untersuchungen über die Entwicklung des schädelgrundes» (1857). «Die Cellularpathologie in ihrer Begründung auf. physiol. und pathol. Gewebelehre» (1858).

«Die krankhaften Geschwülste» (1863—67). «Vier Reden über Leben, und Kranksein» (1863), «Lehre von den Trichinen» (1865), «Über einige Merkmale niederer Menschenrassen» (1875), «Gräberfelder von Koban im Lande der Osseten» (1883), «Gesammte. Abhandlungen aus dem Gebiete der öffentlichen Medicin und der Seuchenlehre» (1879): *Իբրև նշանատը մարդաբան Վիլխոլդ մարդաբանութեան քաականին զիանական ծառայութիւններ է մատուցել. նա միայնակ կամ ուրիշ զիանականների քննչակցութեամբ զանազան երկրների քնակիքների մարդաբանութիւնն է ուսումնասիրել եւ որոնց նետեանցն իր մի շարք մարդաբանական գրումներով հրատարակել: 1879 թ. Վիլխոլդ Ելիման զիանականի նշանատը պեղումներին է մասնակցել եւ այդ առթիւ գրել է «Zur Landeskunde der Troas» եւ «Altrojanische Gräber und Schädel»: 1888 թ. Վիլխոլդ Ելիմանի նետ գլխաց Եգիպտոս, Հարկեստան եւ Պելլոպոննէս եւ այդ երկրները մարդաբանական եւ նագիտական տեսալէտից ուսումնասիրեց: Կովկասը մարդաբանական, նագիտական եւ ուրիշ կողմերից ուսումնասիրելու համար նա նոյնպէս շատ է աշխատել: Բերլինի համալսարանի զիանականներ Լեման եւ Վալդեմար Բեյք նոյնպէս Վիլխոլդի յանձնարարութեամբ են Կովկասն ուսումնասիրում, որոնց մի շարք ուսումնասիրութիւնները հրատարակում են Վիլխոլդ, Բաստիանս եւ Փոս զիանականների մասնաժողովի խմբագրութեամբ յոյ տեսող «Zeitschrift für Ethnologie, Organ der Berliner Gesellschaft für Anthropologie, Ethnologie und Urgeschichte» հանդիսում:*

Իբրև քաղաքական գործիչ՝ նա տոգորուած է մարդասիրական զգացմունքներով: Վիլխոլդը հասկացաւ գիտութիւնն եւ քաղաքականութիւնն իրար նետ միացնել: Նա առողջապահութեան համար նոյնպէս շատ աշխատել է եւ մի շարք գրումներ է նուիրել այդ գործի օգտակար գիտութեան: Պարլամենտի անդամ եղած ժամանակն առողջապահական հարցերը նրա գլխատը հոգեբն էին կազմում:

1856 թ. երբ Վերետուց Վերցցուրգից Բերլին վերադարձաւ, պարբանձնոսի անդամ ընտրուեց եւ միշտ յատաչաղեմ կուսակցութեան շահերն էր պաշտպանում: Պրուսական կառավարութեան (1862—66) սէյմի նետ ունեցած խտուութեան ժամանակ Վերետուց օպպոզիցիոնայի գլխատըր առաջնորդներէից մէկն էր: Երա ամենավերջին՝ մտտ մի ամիս առաջ յոյս տեսած գիտնական աշխատութիւնը ներկայ ուսումնասիրութիւնն է, որի ազատ թարգմանութիւնն առաջարկում ենք մեր ընթերցողներին:

L. A.



Եւս Հին ժամանակից սկսած Կովկասի և զրա Հարաւային գաւառների, մանաւանդ Հայկական բարձրաւանդակի Հեռ կապուած են մի շարք առասպելական լիջողութիւններ և պատմութիւններ, որոնք երբեմն զիցարանական և երբեմն էլ կիսա-պատմական զրոյժ են կրում: Հին գրողների աւանդութիւնները մինչև այժմ էլ մեզ վրայ ազգում են և մենք կարծում ենք, որ Կովկասի լեռների նախապատմական ցեղերն այնպէ ժամանակի ընթացքում մի սեպհական կուլտուրա են ստեղծել ու զարգացրել և այդ կուլտուրան յետոյ լանձնել են գէպի արեւմուտք և հիւսիս զանազանից Հարեան և հեռաւոր ազգերին: Այդ երկրների հեռաւորութիւնն է զլիաւոր պատճառք, որ մարդիկ մինչև այժմ էլ այդ երկրի մասին իրանց կարծիքները հաստատում և երկար ժամանակ պահպանում են: Միայն անցեալ դարու վերջերից սկսած գիտնական ուսումնասիրութիւնների շնորհիւ, մենք կարողացանք այդ երկրի իսկական և նշմարիտ պատմութեան հեռ ծանօթանալ: Բայց շատ անգամ անայառ քննութեան և ուսումնասիրութեան անհրաժեշտ կարեւոր նիւթերն պահատելով զգոյշ հնախոյզներն անգամ ճանապարհէից շեղուել և այս երկրի մասին սխալ զաղափարներ են կազմել:

Գիտնականները վերջին ժամանակ Կովկասը գլխաւորապէս երկու միմեանցից տարբեր ուղղութեամբ են ուսումնասիրել: Մի կողմից գիտնականներն աշխատել են Կովկասի ազգերի առանձնայատկութիւնն ուսումնասիրել և զրանց ու միւս, մանաւանդ եւրոպական ազգերի մէջ եղած ազգակցութիւնն ապացուցանել: Այդ ուսումնասիրութիւնները մարզաբանական ճանապարհով են կատարուել: Միւս կողմից

գիտնականներն այնտեղ են կովկասի բնակիչների գեղարուեստական գործունեութիւնն և ամենից առաջ գրանց վաղ ժամանակուանից ծաղկած մետաղալին արուեստագիտութիւնն ուսումնասիրել: որոնցից այդ երկրի ներկայ քաղաքակրթութիւնն է լառաղացել: Այս վերջին ուսումնասիրութիւնները կուչտուբական-պատմական և մեծ մասամբ հնագիտական ճանապարհով են կատարել: նրանք այդ երկու ճանապարհներով արած ուսումնասիրութիւններով կարող էին իրանց նպատակին հասնել, որովհետեւ այդ երկու ուղղութիւններումն էլ կարելի էր բնագիտական մեթոդը գործադրել, որն երաշխաւորում է գաղափարների պարզութիւնն և գիտակցութեան հաստատութիւնը:

Բայց նորագոյն հետազոտողներն նոյնպէս այդ երկու ուղղութիւններով իրանց կատարած ուսումնասիրութիւնների ժամանակ յարգութիւն չեն ունեցել: Բլումմենբախն իւր մարգարանական հաւասար գաւանանքը կովկասեան ցեղերի սխաւմի առաջարկով ցոյց տուեց: Բայց նրա առաջարկած սխաւմը գեւ. վերջնականապէս չվճռուած հնգկա-գերմանական ցեղի վարդապետութեամբ շուտով քանդուեց: Ժամանակակիցների կարծիքով կովկասցիներն արիացիներին քշել են և այդպիսով ազգերի պատմական և նախապատմական շարժումների համար բոլորովին ուրիշ, անհամեմատ մեծ մի տեսարան ստեղծել: Գործնական մարգարանութիւնը չէ կարողացել կովկասցիներին Բլումմենբախի մտքով ազատել: 1881 թ. երբ ես Սսեթների երկրում ճանապարհորդեցի, այն ցեղի երկրում, որին մի քանի գիտնականներ գերմանացիներին շատ նման մի ցեղ են համարում, ես մի բոլորովին կարճ (brachycephal) գանգ<sup>1)</sup> գտայ, որ արեւմտեան և հիւսիսային լայանի երկար (dolichocephal) գանգերի հետ չէ կարելի համեմատել: Պարոն Է. Մանգրն և գեներալ Յոն Երքերգն<sup>2)</sup> նոյնպէս այս կարճաչիւթիւնը հաստատել են: Բայց ես կարող եմ աւելացնել,

<sup>1)</sup> E. Virchow, Das Gräberfeld von Koban im Lande der Osseten. Berlin 1883, S. 4, 17.

<sup>2)</sup> E. Chantre, Recherches anthropologiques dans le Caucase. Paris et Lyon 1887. T. IV. Populations actuelles. p. 272.

որ ոչ թէ միայն Օսեթներն են կարճազուլեւ, այլ ինչպէս ես առաջ էլ ասել եմ, շինձ չէ յաղոզուել Կովկասում գոնէ երկարազուլեւ մի ցեղ անգամ գտնելու: Բոլոր ցեղերը կամ ուղղակի կարճազուլեւներ են կամ երբեմն միջազուլեւների խառնուրդ են երևում: 1882 թ. ես ճիշտ ապացոյցներով թալաւորական ճեմարանում այդ բանի մասին խօսել եմ: Հայերը նոյնպէս կարճազուլեւներ են. բայց նկատուածեան արժանի է այն երևոյթը, որ Կովկասի գանազան տեղերի, նոյնպէս և Օսեթիայի նախապատմական գերեզմաններում ուրիշ տեսակ, լինին զբանք երկար կամ միջին, գտնուել էլ են պատահում, որոնք աւելի արիական տիպին են համապատասխան և զբանք այն կարծիքն են հաստատում, որ ամենահին նախնական ժամանակ այնտեղ ուրիշ ցեղեր էլ էին ապրում: Իսկ մի քանի գրողների ճիշտեան տիպըս նոր կովկասցիներին է վերաբերում, որ զբանց նոյնպէս չէ համապատասխանում:

Մեզ հետուն կը ասնէր, եթէ ես ալտեղ կարճազուլեւների տիպէ հարցը ցանկանայի աւելի մանրամասն շոշափել, այդ տիպն Նւրոպայի լեռնոս երկրներում ապրածուած է: Մեր գատուութեան համար իբրև մի ուղղակի հետեանք չէր լինիլ, եթէ մենք իմանայինք, որ այսօրուայ Ալբանացիները, Թիբուցիներն և Եփէլցարացիներն առաւելագէտ այդ տիպն են պատկանում:

Մարգալտութիւնը ցոյց է աւել, որ ճիշտեան ցեղը և արիական ցեղը բազմաբններն իրար չեն ծածկում: Այն ժամանակ մեզ հասկանայի է, թէ ժամանակակից մարգալտներն ինչու մի առանձին Կովկասեան տիպ հաստատ չեն ընդունում. այժմ գիտնականներին միայն մի հարց է հետաքրքրում, թէ արդեօք նախապատմական ժամանակում Կովկասեան և արևմտեան Նւրոպայի ազգերի մէջ մի որևէ ազգակցութիւն է գոյութիւն ունեցել: Այս հարցն էական նշանակութիւն կ'առանար միայն այն ժամանակ, երբ հնագիտական գիտերը մեզ ապացոյցներ ապին, որ մետաղաին կուլտուրան առաջին անգամ Կովկասեան երկրներումն է ստեղ-

նուեւ և այդ երկրներէն ուրիշ տեղեր տարածուել: Երկա-  
յումս այդ կործիքի պաշտպանութեան համար ապարեզ են  
գուրս եկել ֆրանսիական զինականներից գլխաւորապէս Յը-  
րոնսուս Լընորմանն և Ալէքսանդր Բերթրանը: Ես իմ Կորանի  
մասին զրած աշխատութեան մէջ այդ կործիքի հակառակ  
հիմքերն եմ պաշտպանել և այսօր էլ աւելի զօրեզ կերպով եմ  
պաշտպանում:

Իմ նրանց հակառակ հիմքերից մեկը ճշմարիտ բնագի-  
տական է: Մեզ յայնի ամենահին մետաղն, որ Կովկասում  
ամենահին մետաղային շրջանում գլխաւորապէս մշակում էին,  
բրոնզն էր: Անալիզներն առանց բացառութեան ցոյց են  
տուել, որ այդ բրոնզն անագեայ բրոնզ էր, այսինքն այնպի-  
սի բրոնզ, որի բաղադրութիւնն այսպէս հոշուած կլասիքա-  
կան խառնուրդին է համապատասխանում: Բայց իսկական  
Կովկասում, Փոքր Անգրիոկկաս հոշուած երկար լեռնաշղթա-  
յում և հայկական բարձրաւանդակից մինչև Ան ծովի եզերքը  
գանուող երկրներում նոյնպէս մեծ քանակութեամբ պղնձեայ  
հանքեր են գտնուում: Պ. Ա. Արքրուինն իմ յանձնարարու-  
թեամբ այդ տեղերում բուսական ժամանակ բարեխիզն ուսում-  
նասիրութիւններ է կատարել, բայց այդ ուսումնասիրութիւն-  
ները բացասական հետեւանք են ունեցել: Իրա համար Կով-  
կասեան մետաղագործների անագը պէտք է գրսից բերած  
համարել: Պարսկաստանը, մանաւանդ Խորասանը, ներկայաց-  
նում է իբրև առաջին ծագման տեղը:

Թէ անագը կամ սրանից պատրաստուած բրոնզը լետոյ  
է մտել, չէ կարելի կատարել կերպով որոշել: Ինչպէս ես  
զիտեմ, մինչև այժմ գերեզմաններում միայն մի կտոր բան  
են գտել, որ վերլուծութեան ենթարկելով անագ է գուրս  
եկել: Ես զօկտօր Վալդեմար Բելքին յանձնարարեցի Անգր-  
Կովկասում պեղումներ անել և նա Գանձակ նահանգի Կալա-  
քենզ զիւղաջաղաքի մօտ մի սօքի կտորած մասանի (Fussring)  
գտաւ, որ մաքուր անագից էր պատրաստուած: Կովկասի նա-  
խապատմական ժամանակին պատկանող գտնուած իրերն Ի-  
րանց կուպիտ յառկութիւնների շնորհիւ անագից պատրաս-

առւած են Համարում, բայց հշմարիտ քննութիւնն այդ բանը չէ ապացուցանում: Երբ ես մեծ քանակութեամբ իբրբ գտայ և ցոյց առի, որ դրանք մաքուր ծարրաքարից (Antimon) են պատրաստուած, այն ժամանակուանից սկսած ալլ ևս Կովկասեան անազալին արտեֆակտները մասին չեն լիշում:

Եթէ մինչև անգամ ապագայ ուսումնասիրութիւնների շնորհիւ Հակառակ մեր կարծիքի Հին գերեզմաններում անագից պատրաստուած իբրբ գտնուեն, այն ժամանակ մենք դրանից կարող ենք եզրակացնել, որ այդ անագն ուրիշ տեղերից է Կովկաս մտել: Կովկասում չեն կարող անագ պատրաստած լինել: Մի առժամանակ ենթադրենք, որ անագը Պարսկաստանից են Կովկաս մտցրել, բայց այդ անագը գերեզմաններում այնպէս պէտք է գրուած լինէր, ինչպէս բրոնզեայ արտեֆակտները, որոնք ինչպէս ես վաղուց ցոյց եմ տուել, առանց բացառութեան արուեստագիտական բարձր աստիճանի վրայ են կանգնած և ախ նախնական ձևերն, որոնք տեղական Հնարագիտութեանն են վերաբերում, բոլորովին պակասում են: Մետազալին արուեստագիտութիւնն այստեղ մեզ ոչ միայն կատարելագործուած է երևում, ալլ և արուեստի Համեմատ որոշ և Հաստատ կազապարներով շինուած: Ի Հարկէ, այդ Հանգամանքը չէ բացասում, որ շատ տեղեր բրոնզ են պատրաստուած: Տարբեր ձևերով ձուլած իբրբ էլ են գտել: Օրինակ Կորանում կուից պատրաստած մի երկասլիքի գաշոյն են գտել: Բացի դրանից Նովո-Ռոսսիյսկի նախապատմական մի կայարանի մօտ, որ Հիւսիսային Կովկասի արևմտեան կողմն է ընկնում, աւազաքարից պատրաստած խուռչ փորելու կացիներ, մանգաղներ, գանակներ և գաշոյններ էլ են գտել: Բայց այս վերջին տեղը թէ իբր գիբբէ և թէ իբր ձուլուած իբրբ լատիւթեան շնորհիւ, մեր ներկայ ուսումնասիրութեան նպատակից դուրս է: Խուռչներ փորելու այդ կացիները, որոնք այստեղ նորոգուած են, ոչ Կովկասում և ոչ էլ Անգր-Կովկասում են երևացել: Բայց այնուամենայնիւ վերջիջեալ տեղերում Հարիւրաւոր բրոնզեայ ֆիբելներ են գտել:

Զնորամ որ Կովկասի ամենաՀին ժամանակից մեզ Հասած ձուլամ ձևերը սակաւաթիւ են, այնուամենայնիւ այնտեղի գերեզմանադաշտերը մեզ Հիմքեր են տալիս կարծելու և ընդունելու, որ այնտեղ տեղական գեղարուեստը զարգացել է, մանաւանդ մետաղային տեխնիկան: Այդ զարգացած և ծաղկած վիճակը մենք տեսնում ենք կենդանիների պատկերների վրայ: Դրանցից մեզ շատ են Հասել, մասամբ իբրև անկախ գեղարուեստական զարծեր ու կախելու զարգարանքներ և մասամբ էլ շատ ամանների, զործիքների, զենքերի, ձեռքերի և Ֆիբրելների զարգարանքներ: Զուլամ բրոնզից պատրաստած այդ կենդանիներից շատերը գտնուել են Ալաալի Հիւսիսային և արևմտեան կողմերում: Բայի գրանից սիրիական ձևերը մի քանի բնորոշ յատկութիւններ են ցոյց տալիս, մանաւանդ պատկերացրած կենդանիների տեսակների զերարեբմամբ, որոնք երկրի Ֆաունայից են վերցրուած: Այլ մենք ուշադրութեամբ նայենք սիրիական բրոնզեայ մի տախտակի և Կովկասեան բրոնզից մի ուրիշ տախտակի վրայ, այն ժամանակ մենք պարզ կը Հասկանանք այդ երկու տախտակների տարբերութիւնը: Այդ բանը վկայում է մետաղային մի յատուկ տեխնիկա, որի սկիզբը գուցե Փերամիկում պէտք է փնտռել: Նման կենդանիներ գտնուել են նոյնպէս Կովկասում: Բրոնզների վրայ գեղարուեստը շատ կատարելագործուած է: Մենք բրոնզների վրայ տեսնում ենք նուրբ և Հազիւ նկատելի փորագրութիւններ և զերջայէս կուլիա քանդակած խորութիւններ և փոսեր: Այս փոսերը շատ անգամ գեղարուեստական կերպով գոյներով են ներկած: Այստեղ առաջին անգամ արժնապակին en champ levé է երևում: Առարկաների ընտրութեան մէջ նոյնպէս կարելի է գեղարուեստի աստիճանարար զարգացումը նկատել: Այստեղ մենք մարդկանց պատկերների նմանեցնում ենք տեսնում. բացի գրանից ոչ միայն ձուլած պատկերներ, կախելու իրեր, այլ և փորագրութիւններ: Մարդկանց պատկերներն երեխայական ձևով են դուրս բերուած և այս բանը գեղարուեստագէտի ոչ վարժ լինելն է ցոյց տալիս: Այդ բանի մասին մենք յետոյ կը խօսենք:

Ան այժմ այստեղ լիշենք, որ բոսերի նկարներ բազմաթիւ չկան: Զանազան զարգարանքների վրայ գտնուած բոսերի մասերը յետազոյմական բաներ են: Միայն կան հասարակ գծեր, երկրաչափական ֆիգուրներ և կենդանիները լիւզուրս բերուած մարմիններ:

Բացի գրանցից կան և շատ՝ փորագրած պատկերներով զարգարուած բրանզեայ արտեֆակտներ: Բայց հիւսիսային և հարաւային գերեզմանադաշտերի մէջ մի զարմանալի տարբերութիւն կայ: Այդ երկու կողմերումն էլ բրանզէ նուրբ թիթեղից պատրաստուած գոտիներ են գտել, որոնց երկու ծայրերի վրայ ամրացնելու համար ծակեր են շինուած: Հիւսիսային կողմում գտնուած գոտիների ամենազեղեցիկ մասն՝ ամրացնելու տեղն էր, այսինքն շարժանդը, մնացած մասը հասարակ կերպով է զարգարուած, իսկ հարաւային կողմում գտնուածներն առաջինների չիշա հակապատկերներն են ներկայացնում. այսինքն այդ գոտիների թիթեղներն երկրաչափական ֆիգուրներով զարգարուած էջ և շարժանդ չունին, այլ մի քանի՝ ամրացնելու համար շինած ծակեր: Այս երկու կուլտուրայի մօտ յարաբերութիւնը չէ կարելի գտնել: Ինչպէս երևում է, այս երկու կողմերում շաշակն ու տերեւիկան միմեանցից անկախ և տարբեր կերպով են զարգացել: Այստեղ հարց է ծագում, թէ՛ այդ տարբերութիւնն սրտեղից է յառաջացել, արգեօք օտար ազգերի հետ ունեցած յարաբերութիւնից, թէ՛ այդ նրանց իսկական գիւտն է:

Պարանի մասին գրած աշխատութեանս մէջ ես այն ժամանակուայ մեր ծանօթութիւնների համեմատ այդ հարցն իսկական Պոփկասի, մանաւանդ զրա հիւսիսային մասի համար մանրամասն շոշափել եմ: Այն ժամանակ ես մի նկատողութիւն եմ արել, որ չեմ ուզում այստեղ կրկնել: Բայց այդ նկատողութիւնից կարելի է միայն այն մասը լիշել, որ Պոփկասի հին գերեզմաններում երևացող գիւտերն երկաթեայ շրջանի սկզբին են պատկանում, բայց միևնոյն ժամանակ և բրանզի հարստութիւնը ի նկատի առնելով, պէտք է եզրակացնենք, որ այդ երկաթեայ շրջանի սկզբի ժամանակին է

պատկանում, կամ այդ երկու մետաղների անցողական շրջանին: Նիսիթական շրջանին պատկանող գերեզմաններ գետևս չեն գտնուել: Աւրեմն չէ կարելի պնդել, որ բրոնզը Կովկասում են հնարել. իսկ երբ այնտեղ գտնուած իրերն այդպիսի գորշմուած ձևեր են ցոյց տալիս և արխայական լատկութիւններ (բառիս բուն նշանակութեամբ) չունին, այն ժամանակ մենք ստիպուած ենք սովորութեամբ և զործածութեամբ հաստատած մի կուլտուրա ենթադրել. սրանից հետեւում է, որ այս կուլտուրայի ծագումը Կովկասից զուրս պէտք է փնտսել. այդ կուլտուրան շատ անգամ Կորանի կուլտուրայի ազդեցութեան գրոշմն է կրում իւր վրայ, բայց այս հանգամանքը տեղական ազդեցութիւններին պէտք է վերագրել: Երբ մենք սկսում ենք այդ գիւտերը մամբաման ըննել, այն ժամանակ մեզ գրանց վրայ եղած կենդանիների ընդօրինակումն և պատկերները շփոթեցնում են:

Այդպիսով մենք այդ հին կուլտուրայի բնագիտական, մանաւանդ կենդանաբանական կողմի հետազոտութեանն ենք հասնում: Այդ գիւտերի վրայ ինչ տեսակ կենդանիներ են ներկայացրուած և զրանցից որո՞նք պէտք է օտար, այսինքն գրոշից ներմուծած՝ կենդանիներ համարել: Պէտք է անկասկած ասել, որ Կորանի գիւտերի վրայ օտար կենդանիներ չկան ներկայացրած: Իսկուպէս շատ զարմանալի է, որ առիւծը, որն ասոր-բարելական գեղարուեստի մէջ նշանուար տեղ է բռնում և այնտեղի պլաստիկին է պատկանում, հին Կովկասում ամենեկին, մինչև անգամ մօտաւոր ներկայացմամբ չէ երևում: Բացի զրանցից Կովկասում ցուլերի պատկերներն այնքան աւրաստվոր են, որ զրանք իբրև բացառութիւն պէտք է համարուին, թէև այսօր Կովկասի վայրի կենդանիների հետ եղներ (Bovid) էլ են պատահում: Ով Նիւուէի կամ Միլլագէտքի և միւս տեղերի մասին կազմած պատկերազարդ աշխատութիւնները թերթել է, նա ամեն ըուպէ առիւծների և ցուլերի միմեանց հետ ունեցած կաւի՛ տեսարանը նկատած կը լինի: Կովկասում այդ կենդանիների հետքն անգամ չէ գտնուել, մինչդեռ Ասորեստանի ազդեցութիւնը Կովկասի վրայ շատ զօրեղ է եղել:

Ներկայումս արևելյան Անդրկովկասում բրանզեայ մի իր են գտել, որի վրայ կարծես առիւծի մի գլուխ է շինուած: Պարոն Եմիլ Բէտայերը Գանձակի Զիւանչիբ գաւառի Առջաւոր կամ Գաւառնի գիւղի մի մեծ կուրգանում բրանզեայ գարմանալի մի անօթ է գտել, որն ինչպէս երևում է, զարգարանքի տեղ է ծառայել: Ինչպէս պ. Ե. Բէտայէրն ասում էր, այդ անօթի չորս անկիւններում բարձուի գլուխները կային: Բայց երբ ես այդ անօթն ուշագրութեամբ քննեցի, նկատեցի որ այդ առիւծները բաշ լուծին և սրանից եղբակացրի, որ գրանք էգ առիւծներ են: Բայց այդ էգ առիւծների գլուխները չեն կարող այդքան փոքր լինել. դրանից յետոյ ինձ Հաւանական թուեց, որ այդ գլուխները Կովկասում յաճախ պատահող յովազներին են պատկանում: Նորերս պ. Ե. Բէտայէրն ինձ յայտնեց, որ ինքն նայնպէս ինձ նման է կարծում: Նա Առջաւորից 10 վերստ Հեռաւորութեան վրայ գտնուող Բալուշա գիւղի մօտ նայնպէս մի բրանզեայ պատառաքաղ գտաւ, որի վրայ շինուած գլուխները յովազի գլխին են նման:

Արդ՝ Կովկասեան բրանզների վրայ ներկայացրած կենդանիներն որ երկրին են պատկանում:

Կորանի կենդանիների պատկերները պարզելու ժամանակ մենք անյազթելի մի գծուարութեան Հանդիպեցինք և գրանցից մի քանիսը Հաստատ կերպով չէինք կարողանում որոշել: Այդ երկրի Հնագիտական գեղարուեստական աշխատութիւնների վրայ ներկայացրած կենդանիների բնագիտական յատկանիշից (Diagnose) պէտք է խոյս տայինք. ոչ թէ նրա Համար, որ աշխատաւորի կրթութիւնը կամ գեղարուեստը մի այդպիսի խնդրի Համար չէր կարող Հասած լինել, այլ որովհետեւ այն ժամանակուայ գեղարուեստագետների նըպատակն էր ոչ թէ սովորական կենդանիներ ներկայացնել, այլ իրանց յատուկ Հնարագիտութեան կամ շիւղալի՝ երևակայական կենդանիները: Կորանում յաճախ պատահող կենդանիներից մէկը մի յորջոտանի է, որն իւր մի քանի նշաններով ձիուն և շատ անգամ մի գազանի է նման: Այս տի-

պը, որին ևս ուրիշ անգամ չեմ պատահել, յովազ—ձի եմ անուանել: Բացի սրանից մի ուրիշ պատկեր էլ եմ տեսել, որը կենդանու նման չէ, այլ թռչունի և կաթնատու մի կենդանու խառնուածք է կազմում. զա սֆինկոս չէ: Մի անգամ այս պատկերը կաթնատու կենդանու զլխով մի թռչուն է ներկայացնում, որի աչքի խնձորներն ականջներ են գտնուում, իսկ վերջիններից գուրս են ցլուում եղջիւրներ, իսկ մի ուրիշ անգամ այդ թռչունը թևեր չունի: Եւ որովհետև մենք չենք կարող այդ երևակայական կենդանիների որդիներն տեսնել, դրա համար մեր ուսումնասիրութեան մէջ զբանց մասին երկար կանգ չենք առնել: Այդ երևակայական կենդանիներից իւրաքանչիւրը յովազի և ձիու խառնուրդն է կազմում. մենք չենք կարող ընդունել, որ այդպիսի մի կենդանի ներկայացնող և հնարող գեղարուեստագէտը վերոյիշեալ երկու կենդանիների հետ էլ ծանօթ եղած լինի: Բայց խկապէս կարելի է ցոյց տալ, որ Կովկասին յովազն և ձին յատուկ են եղել: Վերոյիշեալ Հանգամանքից շարք է անպատճառ եզրակացնել, որ այդ կենդանու հնարողը մի կովկասցի է եղել, որովհետև կենդանական Ատիայի մի մեծ տարածութիւն էլ այդպիսի մի ֆաունա ունի: Բայց կարելի է ասել, որ այդ կենդանիների ֆիզուրներն և երևակայական կենդանիները մի հետու աշխարհի կուլտուրային չեն պատկանում:

Կրանի բրոնզից պատրաստած իրերից ամենից առաջ կուտելու տապարները պէտք է լինել: Պ. Եանգըրը զբանցից 7 հաս գտել է: որոնց առջևի մասը կենդանիների ֆիզուրներով է զարդարուած: Այդ ֆիզուրների մեծամասնութիւնը յովազ—ձիու նկարագրած յատկութիւններն ունի (Պ. I. II. ֆիգ. 1—3). Միայն մէկը (Պ. I. II. ֆիգ. 4) ներկայացնում է մի մեծ եղջիւրու: Գտնների կողպէքն ի նկատի առած՝ կարելի է զբանց զարգացումն և յառաջադիմութիւնը տեսնել: Այդ գտններն երբեմն շատ մեծ և երբեմն էլ ծանր բրոնզից պատրաստուած իրեր են, որոնց վրայ իրական բազմաթիւ կենդանիներ են ներկայացրած: Կենդանիների այդ պատկերները շատ քիչ անգամ են միմեանց յետևից և մի

չարքում ներկայացրած լինում, որպէս զի շարժազութիւն ցոյց տան. խկապէս գրանք միատեսակ բազմաթիւ կենդանիներ են, որոնք զանազան տեղերում միմեանց վրայ են թափուած: Թէև պատահում է, որ զանազան տեսակ կենդանիներ միևնոյն տարածութեան վրայ միասին են ներկայացրուած, բայց այնուամենայնիւ իւրաքանչիւր կենդանի մի առանձնութիւն է ներկայացնում: Միայն մի հաս մեծ իր, որ Կորանում զանուած հնութիւններից գերազատում է, այդ կառելու համար շինած այն տապարն է, որն ես ինձ հետ Գերմանիա եմ բերել: Այդ տապարը բեմի վրայ մի գործազութիւն է ներկայացնում: Բոլորովին մերկ, Հերակլեսի նման մի մարդ կանգնած է բազմաթիւ օձերի մէջ: Այդ մարդն ուզում է մի սազունի վրայ նետ արձակել. նրա ազեղը լարուած է և նետն էլ գրած: Իսկ ինչ մարդուն է վերաբերում, նրա առանձին մասերի վրայ շենք կարող մանրամասն ուշադրութիւն գործնել, որովհետև այդ պատկերը փոքր գիրքով է ներկայացրած: Բայց գեղարուեստագէտն այդ մարդու երեսը, մարմինը, անդամները—ձեռքերն և օտներն—առանձին առանձին վերցրած լու չէ նկարել, որովհետև ուրիշ միջոցներ չէ ունեցել և զրա համար այդ պատկերի մէջ համեմատականութիւն գաղափարը բացակայում է. բայց այդ պատկերն ընդհանրապէս ասած, բուսականին յաջողուած է: Ինչպէս երևում է՝ այդ մարդը բնական և երկար մազեր ունի. նրա մազերը գէպի յետ են տանուած: Այդ մարդու ամբողջ մարմինը փոքրիկ և բազմաթիւ փորագրութիւններով և կարճ գծերով է ծածկուած. գրանք մեզ վրայ այնպիսի սպաւորութիւն են թողնում, իբր թէ այդ մարդու ամբողջ մարմինը մազմզոտ է: Ես այդպէս եմ կարծում, որովհետև կաթնասու բոլոր կենդանիների մարմինն այդպիսի գծերով ծածկուած է. բայց միևնոյն ժամանակ ընդունում եմ, որ այսպիսի գծերով փորագրութիւնն Ծղեղային զարդարանքին (Sparrenornament) է աւելի մասնուած, որ նասուրալիստական նշանակութիւն չունի: Յամենայն գէտն այս տեսքանն ամենաբարձր բանն է, որին Կորանի

գեղարուեսան զարգարանքի զարգացողութեան մէջ հասել է։ Այս տեսարանի ներկայացումն և որս տարածութեան խնայողարար և լաղող գործարութիւնը ցոյց են տալիս, որ այս պատկերի հնարողը մի փորձուած աշխատաւոր է եղել, որ այս որսորդական և կուռ տեսարանը ներկայացրել է։ Այդ մարդու մերկութիւնը մեզ վրայ օտարոտի տպաւորութիւն չպէտք է թողնի. այդպիսի մերկ որսորդներ կարելի է և յառաջաւոր Կովկասի, մանաւանդ Պետաղգորսկի մօտ գտնուող անապատի քարեայ կոթողների վրայ տեսնել։

Անգր-Կովկասում, մանաւանդ հայկական բարձրաւանգակում այդ բանի էութիւնը բոլորովին ուրիշ բան է ներկայացնում։ Այստեղ բրոնզների վրայ փորագրութիւնը շատ տարածուած էր և որանց վրայ ներկայացրած գործողութիւններն իրանց վրայ իրական բնաւորութիւն էին կրում։ Առաջին մարդը, որ հայկական հին գերեզմաններից այդպիսի պատկերներով փորագրուած բրոնզներ է հաւաքել, Քալիբէի ժամանակակից թանգարանի կառավարիչ պ. Յ. զը Մորզանն է եղել, որ Ֆրանսիական նախարարութեան յանձնարարութեամբ Ռուսա-Հայաստանի (Թիֆլիսից հարաւ գտնուող) Եէլթան-Կողի, Ախթալայի և Մուսիերիի նեկրոպոլիսները քանդել տուեց։ Նրա զօած հնութիւնների մէջ կան մի քանի, իրական գործողութիւններ ներկայացնող իրեր։ Էէնց այդ միեւնոյն ժամանակն ես պ. Վալդեմար Բելլիին Ռուզուֆ-Վերտովեան հիմնարկութիւնից միջոցներ տուի և նա սկսեց Գետարէզի, Գրուկայի և Քարամուրազի նեկրոպոլիսներում բազմաթիւ պեղումներ կատարել։ Այս գործունէութեան ժամանակ, որ 1888 թ. ամառուանից մինչև 1890 թ. վերջն տուեց, անապատի կերպով զարգարանքներով ծածկուած բրոնզների մի ահագին քանակութիւն լոյս աշխարհ եկաւ։ Այդ բրոնզների հետ կային և այնպիսիները, որոնք իրանց գեղեցկութեամբ առաջուայ բրոնզներից գերազանցում էին։ Վերջուպէս ուսուցիչ պ. Ե. Րէսուէրն անցեալ ամառ Գանձակ նահանգի Եուշի քաղաքի մօտ գտնուող Խոզալու պատի կայարանի մօտ մի կուրգանում քարեայ մի արկղ (Steinkiste)

բայ արեց, որի մէջ մարդու մի կմախք կար. այդ մարդու մէջքով բրոնզէ մի գօտի էր կապուած, մարդկային և կենդանական օրնամենաօժիւտ. Այն տարածութիւնը, որի վրայ ընկած են այս գերեզմանները, գեւ չէ ուսումնասիրուած. Այդ տարածութիւնն իւր մէջ բազմազան է այն լեռնային երկիրը, որ Կուրի հօգտի հարաւային կողմից հասնում է մինչև Գիսկլայի ծոցը: Դրա արևմտեան սահմանը, ինչպէս մինչև այժմ մեզ յայտնի է, լեռնային երկիր Լեյվարի կամ Լիւալարի շրջակայքումն է ընկած, մօտաւորապէս 44°30' արևելեան երկարութեամբ և արևելքում զբաւած մեծահասակ կէտը (Սուլու մօտ) կարելի է 46°10' նշանակել: Այդ նեկրոպոլիսներից շատերի մէջ 100 և էլ ավելի գերեզմաններ բացուեցան: Պ. Բելքի ցանկը 275-ի հասաւ: Թէև այդ գերեզմաններն առանձին առանձին վերցրուած միմեանցից մասամբ տարբերուած են, բայց զբանց բնաւորութիւնն ընդհանրապէս միևնոյն է: Դրանք քարէ մեծ սենեակներ էին, որոնք ժայռի մեծ և տափակ քարերից էին շինուած և իրանց մէջ ամփոփուած էին բազմաթիւ մարդկանց, ձիերի և ուրիշ կենդանիների կմախքներ. այդ գերեզմաններում կային նոյնպէս մետաղային և ուրիշ անոտակ անօթներ: Բրոնզն ամէն տեղ գերիշխող գեր է կտատարուած. բայց երկաթն էլ յաճախ է պատահուած: Պ. Բելքը մեծ քանակութեամբ գերեզմաններ է բաց արել, որտեղ միայն բրոնզ է գտել: Այս բանց մէջ օպսիդեանի կտորներ էլ կային: Այս գերեզմանները բրոնզեայ շրջանին են վերագրուած, բայց պէտք է ասել, որ զբանք բրոնզէ և երկաթի անցողական շրջանին են պատկանում: Մենք մինչև այժմ ոչ մի հիմք չունինք, որպէս զի այս թաղուած մարդկանց շրջանի ազգաբնակութեան փոփոխութիւնն եզրակացնենք: Առ այժմ հաստատ զիսենք, որ այս գերեզմաններում գտնուած մարդիկ միևնոյն ցեղին են պատկանում և միևնոյն ժամանակ այնպիսի մարդիկ, որոնք իրանց գանգերի ախպի համաձայն Կովկասի այսօրուայ, ժամանակակից ազգաբնակութիւնից տարբերուած են:

Հայկական բարձրաւանդակի կմախքները գօտի են կա-

պում գեռ in situ ներքեի փորի վրայով: Պ. Չ. դը Մոր-  
գանը գրանից մեզ մի քանի պատկերներ է առել: Նա  
նայնպէս ապացուցել է, որ գօտիները միայն ժարգիանց գե-  
րեզմաններում են գտնուում:

Այս 'ընդհանուր' բնորոշումից յետոյ, ես գտնում եմ  
մետաղային գօտիներէ մի քիչ մանրամասն նկարագրութեան,  
որովհետեւ մեր ներկայ ուսումնասիրութեան համար մեռել-  
ների թաղման ամենազլխաւոր մասն է կազմում: Այդ գօ-  
տիները տարբեր լայնութեան բրոնզէ թիթեղներից են շի-  
նուած, որոնք շատ հարթ են: Ես չեմ կարող գրանց վրայ  
մուրհների զարկերն ընդունել: Դրանց ամենամեծ համարներն  
72—30 ս. երկարութիւն և 8—15 լայնութիւն ունին: Դը-  
րանց ծայրերը կլոր են և ծակեր ունին միմեանց հետ ամ-  
րացնելու համար: Այդ գօտիներէ բոլոր կտորները պարզ,  
մոխրականաչ, թուխ և կապոյտ կանաչ գոյներով ժանգ ու-  
նեն: Յայտնի է, որ այս տարբերութիւնը մետաղային տար-  
բեր խառնուրդիցը չէ յառաջանում, այլ հողի, ժանգոտած  
քարերի և այլ գերեզմանները ներս մտնող վատաւորջ ջրե-  
րի ազդեցութիւնից: Դժբաղդարար բրոնզների մեծամասնու-  
թեան շիժիական գործաւնութիւնն այնքան յառաջադիմել  
է, որ մետաղը շատ անգամ բաժան բաժան է եղել, այնպէս  
որ շատ գերեզմաններում միայն մնացորդներ են գտել: Դը-  
րանցից շատերն այնքան փոքր են, որ մարզ հեռոցհեռէ  
է սկսում գրանց վրայ ուշադրութիւն զարմնել: Շատ կարե-  
լի է, որ այդպիսի մնացորդները գիտնականներին առաջուց  
են յայտնի եղել, բայց նրանք գրանց վրայ ուշադրութիւն  
չեն զարմրել: Պ. Բելքը ցանկութիւնս կատարել և հոգացո-  
ղութեամբ այդ փոքրիկ կտորներն էլ է հաւաքել: Նա շատ  
է աշխատել այդ զիւտերի փոքրիկ կտորներէ ամբողջութիւնը  
կազմելու: Իմ նկարիչ պ. Էմիլ Օլբրիին այնպիսի մի սուր գի-  
տաղութիւն ունի, որ երկար ժամանակ պահանջող աշխա-  
տութիւնից յետոյ կարողացել է այդ զլխաւոր կտորները մի-  
մեանց հետ այնպէս գտաւորել, որ մի ամբողջ պատկեր է  
գուրս եկել:

Իրանց կազմութեան համեմատ բրնձեայ գօտիներն երեք խմբերի կարելի է բաժանել:

1) Առանց զարգարանքի բուրդին հարթ թիթեղներ, որոնք շատ հազուադիւս են:

2) Քանդակած և փորագրած զարգարանքներով թիթեղներ, որոնք աւելի երկրալափական բնաւարութիւն ունին:

3) Պատկերներով և փորագրութիւններով թիթեղներ, որոնց վրայ մարդկանց և կենդանիների պատկերներ կան:

Առաջին խմբին պատկանող եւ մի գօտի ունիմ. զաթ հարկէ կտորուած, բայց շատ լաւ պահպանուած է. այդ գօտին Կալաքենդի մի գերեզմանումն է գտնուել, որ մօտ 78 սանտ. երկարութիւն և 9 սանտ. բարձրութիւն (լայնութիւն) ունի:

Այժմ պէտք է զբաղուենք միւս երկու խմբերով: Թէև երբորդ խումբը մեզ աւելի է հետաքրքրում, բայց երկրորդ խումբն էլ մի առանձին արժէք ունի, որովհետև զրա փորագրութիւնը, նկարի նրբութիւնն և պարզութիւնը ցոյց է տալիս, որ գեղարուեստագէտն լաւ կրթութեան տէր մարդ է եղել: Կովկասի գեղարուեստի նախնական պատմութիւնը գրելու համար այս գիւտերից կարելի է օգտուել և զբրանց զարգարանքներն այդի առաջ ունենալ: III տախտակի վրայ բացի մի քանի մեծ և առանձնացած մնացորդներից, կան և այնպիսի շատ լայն գօտեայ թիթեղներ, որոնք էլի մեզ լաւ հասած մնացորդներ են կազմում: Այդ գօտիների մեզ հասած ծայրերը կլոր են և զարգարուած (Համար VI, IX և XII): Միայն մի զէպքում (Համ. VIII) ծայրերը ուղիղ կտրուած են: Այդ գօտիի երկու ծայրերի վրայ ամրացնելու համար ծակեր կան: Իրա լայնութեամբ գծեր կան. լայն գօտու (Համ. VII) 5 գծեր, իսկ Համ. XI-ի վրայ միայն 3 հատ: Այդ գծերը միմեանց համեմատութեամբ զուգահեռական են: Համար IX-ը իւր եղերքների մօտ գծեր ունի. այդ գծերն երբեմն գօտու երկու ծայրերի վրայ միմեանց վրայ ընկած սուր անկիւններ են կազմում:

Համարեա ամեն զէպքում գծերի մեծ մասը հիւսուած

զարգարանք (Flechtornament) է կազմում: Այդ զարգարանքներն երբեմն լայն և երբեմն էլ նեղ են լինում և ծածկուած են կէտերով: Համար XI-ի մեզ հասած մնացորդների վրայ այդ կէտերի կարգաւորութիւնը բուսականին վայելուչ է: Դրանց վրայ նոյնպէս ոգեր են ներկայացրած, որոնք երկար, միատեսակ և կլոր են: Աւելի նեղ գծերը սլորանէ զարգարանքի (Spiralornament) նման են և սրա, հիւսուած զարգարանքից ծագումը պարզ երևում է: Այս դասու առջևի սլորուն զարգարանքը կրկնակի, իսկ յետեինը հասարակ շրջապատներ ունի: Ընդհանրապէս վերայիշեալ գոտիների եզերային լայն գծերը 4 գծերից բազկացած սլորումներ են ցոյց տալիս կամ երկու կրկնակի շրջապատներ: Համար XI-ում մի շարք փոքրիկ կիսաշրջաններ կան, որոնց բաց կողմը գէպի գուրան է նայում: Եսա անգամ երկու ուղիղ գծերի մէջ եղած տարածութիւնը ծածկուած է ծուռ և միմեանց հետ խաչուող գծերով (Համար VII), կամ հասարակ, ծուռ և կոշ գծերով (Համ. VIII): Համար VII-ում երբեմն այդ տարածութիւնը մի տեսակ անկիւններով է ծածկուած կամ մի շարք միմեանց յետեից գրուած զուգահեռական ծուռ գծերով: Համար VIII-ը մի երկար և ուղղանկիւնանի միջին տարածութիւն ունի, որ չորս մասերի է բաժանուած: Իւրաքանչիւր մասում զգծերով երկու կիսազնգեր կան, որոնք կէտերով ծածկուած են: Այդ կիսազնգերը կարող են և բարձրութիւններ լինել: VI. Համարը մի նման, բայց աւելի բարդ նկար է ներկայացնում: Զանազանութիւնը կայանում է միայն նրանում, որ VI. Համարի իւրաքանչիւր փոքրիկ մասի երկու կողքերումն էլ են կիսաշրջաններ նշանակած: Դրա կիսաշրջանները նոյնպէս կէտերով ծածկուած են: Այդ կիսաշրջանների մէջ եղած տարածութիւնը կարճ և կիսալուսնի ձևի գծերով լցուած է: Համ. VIII-ի նկարի վրայ ներկայացրուած են մի շարք փոքրիկ սուրանկիւն եռանկիւնիներ: Սրանց բալորի հիմքը գէպի ներսն է ուղղուած: Բոլոր սուրանկիւն եռանկիւնիները կէտերով են ծածկուած: Դրանց գագաթները հասնում են մինչև շրջապատող գիծը: Այդ սուրանկիւն եռան-

կիւններն երկու շրջապատոյ զծեր ունին: Երկու սուրան-  
կիւն եռանկիւնների մէջ եղած խրաքանչիւր տարածութիւնն  
էլ մի սուրանկիւն եռանկիւնի է կազմում: Այդ եռանկիւ-  
նին նորնպէս երկու շրջապատոյ զծերի մէջ է ընկած: VII  
Համարում եռանկիւնների փոխանակ կոպիտ և ծուռ ճան-  
կեր կան, որոնց ներսը կէտերով է լցուած: Այդ ճանկերի  
հիմքը շրջապատոյ զծի վրայ է ընկած, իսկ միւս շրջապա-  
տոյ զծին մտանում են այդ ճանկերի միշտ գէպի ձախ կոր  
ծայրերը: Այդ բանն ոչորուն զարգարանքի սկիզբն է ցոյց  
առնի: VIII և IX Համարների սուրանկիւն եռանկիւննե-  
րը խաշառն, զուգահեռական և թեք զծերով են նաձուլուած:

XII Համարի մնացորդների զարգարանքը շատ զեղա-  
րուեստական է: Ինչպէս սարք երևում է, այդ մնացորդնե-  
րը միմեանց են պատկանում: Այդ նկարի եզրի մաս զանուոյ  
կէտերի երկու շարքում երկաթ օգտկներով մի հիւսուած  
զարգարանք է ներկայացրուած: Այստեղ կան երկու կրկնակի  
շրջապատուոյ մասանիներ, որոնցից խրաքանչիւրը շրջապա-  
տուած է կէտերով: Այդ մասանիները շրջապատուոյ երկու  
զծերի մէջ թեք զծեր կան, որոնք ներսում նուրբ եռան-  
կիւններ են կազմում: Յետոյ գէպի գուրս է ընկած մի հիւ-  
սուած զարգարանք, որ մի մեծ մասանու ձև ունի: Այդ  
մնացորդը O տառին է նման և ինչպէս երևում է՝ այդ մա-  
սը գոտին ամբողջներու տեղն է: Այդ զարգարանքների մնա-  
ցած մասերը երկրորդ մնացորդի վրայ կարելի է նկատել:

X Համարի մնացորդների զարգարանքը չէ կարելի  
Հաստատ որոշել, որովհետև այդ մնացորդներից ոչ մէկը մեզ  
ամբողջովին չէ հասել: Դրանցից երկուսի վրայ նայողը աւա-  
զի ժամացոյցի նման մի պատկեր է նկատում: Երկու, իրանց  
ծայրերով միմեանց վրայ գրուած կաներ, որոնք գրսից շատ  
ուղիղ զծերով են շրջապատուած, իսկ ներսից կոր զծերով  
սահմանուած: Այս պատկերների անկիւններից երբեմն գե-  
րաններ են գուրս գալիս, որոնց մէջ կրկին թեք զծեր կան:

Ինչպէս երևում է, այս բոլոր նկարներն ազատ ձևաքի  
արգիւնք են և փարազրութիւններով զարգարում: Դրանք

այնքան քնքայլ են, որ միայն ծուռ լուսաւորութեան ժամանակ կարող են պարզ նկատուել: Առհասարակ գրանք մեզ վրայ լաւ և կանոնաւոր տպաւորութիւն են թողնում:

Կովկասեան միւս գերեզմանագաշտերի բրոնզների վրայ երբեմն կաղապարներ են գտնուում: Մուսիերիում բրոնզեայ թիթեղ ունեցող երկաթէ մի գաշայն են գտել, որ 11 տարբեր մասի է բաժանուած, գրանցից ետիք սուրանկիւն և մէջը կէտեր պարունակող եռանկիւնիներ ունին, իսկ մնացած չորսը ծուռ և ներսում նայնպէս կէտեր բովանդակող ճանկեր (Voluten): Սագակչոյում գտնուած բրոնզեայ մի նեղ խոզովակի շրջապատում են 6 շարք սուրանկիւն եռանկիւնիներ. այդ խոզովակի ծայրերը միմեանց հետ խաչուող գծերով ծածկուած են: Եւլիթան-Կաղի սոկրեայ մի սանր ամբողջովին ծածկուած է խաչուող գծերով:

Կորանի տապարների վրայ մենք զարգարուած եռանկիւնիներ ենք տեսնում. այդ եռանկիւնիները բացի գրանից խաչուող գծերով և ծպեղեայ զարգարանքով ծածկուած են: Դոսիների կողպէքների եզերային և կենդրոնական գծերի վրայով խաչուող և կտր գծեր են անցնում: Մեծ կամարաւոր Փիրելիների լաճախ երկար կապեր կան, որոնք կտր գծերով և ծպեղեայ զարգարանքով ծածկուած են: Դրանք նայնպէս բաժանուած են մասերի, որոնց վրայով խաչուող գծեր են ներկայացրած: Մանր բրոնզների վրայ կէտերի շարքեր հազիւ են պատահում: Բայց Վրաստանի Դորի քաղաքի բրոնզների վրայ այդ կէտերի շարքերին կարելի է պատահել:

Հիւսուած զարգարանքի բանը բուրբոփին ուրիշ է: Այդ զարգարանքը ոչ միայն վերայիշեալ, այլ և Կալաքենդի բրոնզների վրայ կարելի է նկատել: Կալաքենդի բրոնզների մասին մենք յետոյ կը խօսենք: Մուսիերիի գոթիներն ազնւանակ եռանկիւնիների փոխանակ իրանց վրայ կոճակների նման պատկերներ և նուրբ կէտեր են կրում, գրանք նայնպէս կապեր ունին, որոնք ոչորուն գծերից են բարդուած:

Կաւէ անօթիների վրայ համարեա բացակայում է հիւսուած զարգարանքը: Բայց գրանց վրայ պատկերացրած ե-

աանկիւնիները շատ գեղեցիկ և կանոնաւոր են և գրաւում են մեր ուշադրութիւնը: Կովկասի նախնական պատմութեան Հիմնագիր Ֆրեդրիխ Բայերնը ասում է, որ Ռեզկին Լագերի կաւէ անօթների վրայ շատ անգամ եռանկիւնիները և պիրամիդներ կան պատկերացրած: Կաւէ այդ անօթներն առաջին անգամ Անգր-Կովկասի սափորակիր գերեզմաններումն են գտել: Բայերնի կարծիքով սեպանե գիրն այդպիսի եռանկիւնուց է ծագել, իսկ այդ եռանկիւնիները նետի ծայրերի ձևի նման են: Այդ գիտնականը զէպի Հիւսիս մինչև Աեանայ լիճն այդ սեպանե գրերին Հեաեւ է: Այդպիսի օրինակի տեղ են ծառայում Սամթհաւրայի ներքևի մասի կաւէ ամանները: Հափական բարձրաւանգակի համար պարոն գը Մորգանը գրանց նման բազմաթիւ ամանների պատկերներ է նկարել: Նա այդ ամանները գտել է Սագակլայի, Եէլթան-Դագի և Մուսիերի գերեզմանադաշտերում: Թէ այդ եռանկիւնիների և թէ ուրիշ ամանների զարդարանքների միջին տարածութեան մէջ գեղարուեստական ճաշակով կը գծեր (lignes disposées quatrille) կան: Պատահամբ գտնուում են նոյնպէս և այնպիսի կժեր, որոնք հորիզոնական գծերով մասերի են բաժանուած: Խաչագիր գծերն ամենից առաջ կարող են աւելի կախուղ կաւէ ամանների վրայ գործադրուել: Այդպիսի գծեր նոյնպէս գտնուում են և կենդանիների պատկերների վրայ, որոնց մասին շուտով պէտք է խօսենք:

Այստեղ այժմ պէտք է խօսենք գրախառային ամբութեան (Paradiesfestung) մօտ գտնուած մի գերեզմանի գօտու թիթեղի (№ 48) մասին, որ բոլորովին առանձնայատուկ զարդարանք ունի և մեծ մասամբ մեզ է հասել (Համ. XIV): Այդ թիթեղը համեմատաբար աւելի նեղ է (58<sup>mm</sup>), սրա երկու ծայրերը կտր են և իւրաքանչիւրի վրայ մի ծակ կայ: Դօտու թիթեղի արտաքին կողմը նուրբ կերպով յղուած է: Այդ թիթեղն իւր երկայնութեան տարածութեամբ եղբրային մի գիծ ունի, որ կրկնակի շարքով մեծ, հարթ և գրոշ մուած սապտաներով է ծածկուած: Եստ անգամ այդ տարածութեան միջին մասում փոքրիկ և կտր ծակեր են գտնը-

ւում, որոնք զոյգ զոյգ են գառաւորում. բացի գրանցից այդանց կան նոյնպէս ուրիշ ձևի ծակեր: Ըստ երևութին այդ ծակերը ծառայում են գօտիները կաշուէ կամ բրդէ մի բանի հետ ամրացնելու համար: Եզրային տարածութեան միւս իւրաքանչիւր կողմում (զերև և ներքև) մի շարք խիտ կերպով պատկերացրած սուրանկիւն եռանկիւնիներ կան, որոնց հիմքերը միմեանց զպլում են: Իւրաքանչիւր եռանկիւնի այնպէս է ներկայացրած, որ հիմքի գծի վրայ մի ուրիշ փոքրիկ եռանկիւնի էլ է գրուած:

Իրախտի ամրութեան մօտ մի գերեզմանում (ՁՆ 39) եւ բրանդեայ մի ծանր մատանի գտայ, որ 2 սանտիմետր լայնութիւն ունի. այդ մատանին (Պատ. I) կլոր մի բացուածք ունի, որի կողքին մի կենդանու գլուխ է նստած. այդ կենդանու գլուխը շան գլխի նման է, զրա ախանջները կախ են ընկած. այդ կենդանու միւս մանրամասնութիւնները չենք կարողանում որոշել: Սկզբում ես կարծեցի, թէ այդ մատանին գուցէ մի գօտու փականք է, բայց յետոյ կասկածեցի, որովհետև մի գօտի մի այդպիսի մեծ ծակ չէ կարող ունենալ, որով կարողանաւ այդ կենդանու գլուխն անցնել: Այս գերեզմանում դանուած գօտու թիթեղի իւրաքանչիւր ծայրի վրայ փոքրիկ ծաւալով մի ծակ ենք նկատում, որ կենդանու գլխին չէ համապատասխանում: Այս թիթեղը 65° 5 երկարութիւն և 5° լայնութիւն ունի: Դէպի ծայրերն այդ թիթեղը հետզհետէ նեղանում է: Այդ թիթեղի վրայ է հիւսուած գծեր կան. գրանցից երկու ներքին գծերի մէջ մի հինգերորդ գծի թող և ճնշուած հետքեր են երևում: Այդ գինը մեզ վրայ այնպիսի տպաւորութիւն է թողնում, իբր թէ այդ պատկերը մամուլի ճնշումից յառաջացած լինի: Իրախտի ամրութեան մօտ մի ուրիշ բրանդէ մատանի էլ են գտել, որ առաջին նման կախելու համար շինուած կեռ բան չունի: Այդ մատանու մի մասն ուրիշ տեսակ է կազմուած: Իրա գլուխն ուրիշ տեսակ է շինուած և իւրաքանչիւր կողմում մի փոքրիկ կլոր բացուածք ունի. այդ բանն ախանջի է նմանում: Դլուխն ուղղանկիւնի է և գրուած է

վզի վրայ. գլխի ստորին մասը տափակ կերպով կտրուած է. վերոյիշեալ կասկածներն այս մասանուն էլ են վերաբերում. Ինչ ծանօթ իրերից այս երկու հետախուզողները մեծ մասամբ ազնուաբերին են նման:

Այժմ մեզ մտած է իտալու. դուռէ այն թիթեղների մասին, որոնց վրայ մարդկանց և կենդանիների պատկերներ կան փորագրուած. Որովհետեւ գրանք դասախօսութեանս գլխաւոր խնդիրն են կազմում և գրանցից միայն 4 հատ ունիմ, գրա համար ես աւելի լաւ եմ համարում գրանք առ այժմ առանձին առանձին նկարագրել, իսկ յետոյ միւս ոչ շատ յայտնի գիւտերը գրանց հետ միացնել և ընդհանուր նկատողութիւններ անել:

ԿՅՐՈՐ 1. (1 ՏՈՒՏՈՒ ՎՐԱՑ ԿՅՍ ՄԵՆՈՒՄԵՆՏԵ ԿՅՐՈՐՈՒՄ):

Այս կտորը պարտն Բեւրն է գտել և ինչ հասցրել, զա զանազան աւելի մանր կտորների է բաժանուել և վառ եղանակից վնասուել. Այդ կտորները աւելի մանր մնացորդներ են գարնել. բայց իմ նկարիչ պարտն է. Ոյրիին այդ մանր կտորները միմեանց հետ այնպէս լաւ դասաւորել, միացրել և բարդել է, որ այդ թիթեղը մեզ վրայ ամբողջի է առաջուայ ապաւորութիւնն է թողնում. Դուռէ այս թիթեղը վազող եղջերուների մի շարքի տեսարանն է ներկայացնում:

Այդ կենդանիներից ոմանք երբեմն ծանրակշիռ տարբերութիւններ են ցոյց տալիս. այս հանգամանքը գեղարուեստագէտի անհատականացման առանձին ընդունակութիւնն է ցոյց տալիս. բայց այդ բոլոր կենդանիների գլխաւոր յատկանիշները գրեթէ միևնոյն են: Այս հանգամանքներն ի նկատի առնելով, պէտք է ենթադրենք, որ գեղարուեստագէտն ուսումնարանական կրթութիւն է ստացել: Այդ եղջերուների մարմիններն երկար են և գրանց ամենազարգացած մասերը կրծքի և վզի կողմերն են կազմում, այն ինչ մարմինների յատկ մասն հեռզհետէ աւելի բարականում է: Որովհետեւ այդ կենդանիներն արագ վազում և ցատկում են, գրա համար նրանց մարմնի յատկ մասն աւելի բարձր է, իսկ առ-

ընկնն աւելի ցածր. դրանց յետևի ոտները հողին կամ բուս-  
բույսին կամ միայն մասամբ են դիպչում, այն ինչ կրճիներն  
աւելի ցածր են ընկած և առջևի ոտները հողին շատ թե-  
քիչ մասնցրած են: Դրանց վզերը բարձր, քիչ յետ ընկած,  
շատ լայն և զօրեղ են, գլուխները փոքր, աչքերը մեծ և կը-  
լոր, գնչերը բարակ և երկար, իսկ եղջիւրները զօրեղ: Դրանց  
աչքերը մի մեծ արտաքին ուղակի մէջ են, որ աչքի խնձորին  
է համապատասխան. աչքի խնձորի մէջ մի ներքին փոքրիկ  
ուղակ էլ կայ, որ, ինչպէս երևում է, Երբսն է ցոյց ապիս:  
Դնչերը բնականինց զուրս իրանց հիմնական մասում աւելի  
նեղ են և քանի երկարանում, այնքան էլ լայնանում են:  
Մի խոսքով գրանք ձուի կերպարանք ունին:

Մի քանի կենդանիների զնչի հիմնական տեղում մի  
զուրս ցցուած մաս էլ կայ, որ կրկնաճանկի կերպարանք ու-  
նի: Այդ զուրս ցցուած մասն իւր գիրքով ներքնակզակին է  
համապատասխանում. բայց այս համեմատութիւնն այն ժա-  
մանակ միայն տեղին կը լինէր, եթէ ընդունէինք, որ այս  
կենդանիները բերանները բաց էին պահում, որ վազելու  
ստատկութեան ժամանակ շատ հաւանական է: Մի այդպիսի  
զուրս ցցուած մաս էլ շատ անգամ առջևի ոտների յետևի  
մասումն է պատահում, որտեղ սովորաբար վեզի յօդն է ընկ-  
նում: Այդ զուրս ցցուած մասը բուխ է և այդ միևնոյն բա-  
նը յետին ոտների վրայ էլ է նշանակուած: Դրանց ոտներն  
աւհասարակ երկար են. ոտների հեռաւոր մասերն աւելի  
բարակ են, իսկ մօտաւոր մասերն աւելի զօրեղ: Սմբակները  
շատ զօրեղ են և ուղիղ կամ կոր հիմք ունին. դրանց վրայ  
բաժանմունքներ չենք նկատում, այնպէս որ գրանք միու-  
սմբակներին են աւելի նման: Բարձերն ու նստատեղին բալո-  
բովին կլոր են: Կարճ և կոր ուղղութիւն ունեցող ազին  
այդ կենդանիների արտաքին տեսքն է լրացնում:

Դրանց մարմնի ամբողջ մակերևույթը կարճ գծերով և  
կէտերով ծածկուած է, որոնք մազերն են ցոյց ապիս: Այդ  
կենդանիների շնչին ասրածութիւն բաձող մասերն, որ, ազին,  
մարմնի ծայրի անգամները, գունչն և եղջիւրը կէտերով կամ

բայրօրովին կարն, զրիթէ կէտանման գծերով են ծածկուած. բայց իրանն և բարձերն աւելի երկար գծեր ունին, որոնք կենդանու մարմնի աւելի շատ մազմազոտ մասերն են ցոյց տալիս: Այդ գծերի ուղղութիւնը տարբեր է, այնպէս որ 4—5 և շատ անգամ մարմնի աւելի շատ մասերը (զիզ, առջևի սրունքներ, կուրծք, փոր և երիկամունք) միմեանցից բաժանուած են երևում: Մազերի բնական ուղղութիւնն այստեղ ընտրած ուղղութեանն չէ համապատասխանում: Բայց այնուամենայնիւ այդ թիթեղի վրայ ներկայացրած կենդանիներն ազդեցիկ և բնական կերպարանք ունին:

Եղջիւրների ներկայացումը շատ զարմանալի է: Առաջին հայեացքից մենք նկատում ենք այդ եղջերուների երկու տարբեր տեսակները, որոնց մասին ամենևին չպէտք է կասկածել: Թիթեղի վրայ ներկայացրած կենդանիների ամբողջ շարքը խմբերի է բաժանուած, որոնցից իւրաքանչիւրն 3 կենդանուց է բազկացած: Այս կենդանիներից յետևի երկուսն ազնիւ եղջերուի (Servus elaphus) սովորական եղջիւրներն ունին, իսկ երրորդ կամ առջևի կենդանին գէպի յետ ընկած եղջիւր ունի: Այս ձևով բայր կենդանիները կարելի է 5 խմբի բաժանել, որոնցից իւրաքանչիւրն 3 կենդանի ունի: Այդ կենդանիները միմեանց յետևից արագ և ցատկելով վազում են: Շատ կարելի է, որ այդ թիթեղի վրայ առաջ շատ կենդանիներ են եղել ներկայացրած: Այդ թիթեղի ազնիւ եղջերուներն երկար և բարակ եղջիւրներ ունին, որոնք 4—7 չիւզերից են բազկացած: Եթէ փորագրելու տարածութիւնն աւելի մեծ է եղել, այն ժամանակ եղջիւրի բունն աւելի երկարացրել են: Մանուանդ դատու թիթեղի միջին մասում ներկայացրած եղջերուի 7 չիւզ ունեցող եղջիւրներն աւելի յետև են ընկած: Եղջիւրների բները հասարակ չեն, այլ զբրանց չիւզերի հիմքի մօտ մի տեսակ բաժանումն է նկատում, ինչպէս մի բայտի բաժանուած բները: Իւրաքանչիւր եղջերուի չիւզը մի կյուր մաս ունի: Բայց թէ բներն և թէ չիւզերն այնքան բարակ են, որ գծերի միայն մի շարք կարող են իլանց մէջ պարունակել: Բայր չիւզերը գէպի

գուրսն են ուղղուած, գրանցից շատերի ծայրը ճանկանման թեքութիւն ունի:

Երկրորդ տեսակ եղջիւրների բանը բոլորովին ուրիշ է. գրանք նայնպէս երկար են, բայց մասամբ աւելի զօրեղ, քան աղնիւ եղջերուների եղջիւրները: Դրանց բոլորի բները հասարակ, ուղիղ և հաստ են, այնպէս որ գրանք կէտերի փոխանակ, կոր գծերով կարող էին ծածկուիլ: Այս բների վրայ ընկած են լայն, բայց համեմատաբար աւելի կարճ ճիւղեր, որոնք զօտիների կապերի և ամանների եռանկիւնիների նման եռանկիւնիներ են կազմում: Աերջիներին լայն հիմքերը գէպի ներսն են ընկած, իսկ սուր ծայրերը մեծ մասամբ գէպի դուրս: Այդ եռանկիւնիների սուր ծայրերն երբեմն էլ գէպի ներս են ուղղուած: Բայց պէտք է ասել, որ այդուրս և մերսս որոշումները միայն միևնոյն բների համար են հաստատ, որոնք երկու կողմիցն էլ ճիւղեր ունին. միւսների ուղղութիւնը չէ կարելի որոշել, որովհետև զեղարուեստագէտն երկու բների հետ էլ միևնոյն մտքով է վարուել, այնպէս որ ճիւղերը բոլորովին գէպի միևնոյն կողմը են ուղղուած: Մի բնի ճիւղերի թիւը 11-ի է հասնում: Ճիւղերի մակերևութիւնը կէտերով խիտ կերպով ծածկուած է: Մի քանիսների վրայ 25—40 շարք կէտեր կան:

Մի եղջերու, որի առջևի մասը կորել է, երկար և հաստ ազի ունի. այդ հանգամանքը բոլորովին մի առանձնալատուկ բան է: Այդ ազին 25<sup>mm</sup> երկար է. գրա հիմքի հաստութիւնը 5<sup>mm</sup> է. բայց սովորական ազիները հազիւ 5<sup>mm</sup> երկար են, որոնց հիմքի հաստութիւնն 3<sup>mm</sup> է և իրանց ծայրերով գէպի լեռ են ծուռւած: Գոտու միջին մասը բացի մի քանի կենդանիների պատկերներից, մի քանի զարգարանքներ էլ է պարունակում: Այդտեղ կան լայն հիմքով եռանկիւնիներ և ճանկանման ծուռւած ծայրեր: Այդպիսի երեք ճանկեր գոտու թիթեղի ձախ ծայրի վրայ են գտնուում, որտեղ վազող կենդանիների շարքը զազարում է: Դրանցից ամենամեծը վերևի եզրից կախուած է: Հենց այնտեղ, որտեղ լայն ճիւղեր ունեցող եղջերուի երկար ազին վերջանում

է: Իսկ միւս վեցը թիթեղի ներքեւի եզրի մօտ են: Թուերին նշանակութիւն չաւտաք է տալ, որովհետեւ ներքեւի եզրը բոլորովին վերաւորուած է: Բոլորը խիտ կերպով կարճ և լաճախ գրեթէ կէտանման գծերով ծածկուած են:

Բոլորովին զարմանալի է մի նկար, որ լայն ճիւղեր անեցող եղջերուի եղջիւրի վերջումն է ներկայացրած. այդ նկարն եւ արեգակի պատկերի տեղն եմ ընդունում:

Մի օղակի 8 շառաւիղները գէպի օղակի շրջագիծն են վազում, ինչպէս մի անիւի 7 շառաւիղները: Այս ֆիգուրի բոլոր գծերը կէտերի շարքերից են բաղկացած:

Այժմ մենք անցնենք եզրների բովանդակութեան, որ շատ լայն, բարդ և զեղեցիկ է ներկայացրած: Աղբերուների շարքի շուրջը կանուած է մի զօրեղ և կրկնակի շրջապատ և թեք գծեր բովանդակող եզր: Յետոյ գալիս է բոլորովին լայն մի տարածութիւն, որի մէջ երեք շարք ուրուսն զարգարանքներ միմեանց հետ այնպէս են միացած, որ զբանցից միջինը գէպի աջ, իսկ միւս երկուսը գէպի ձախ են ուղղուած (վազող շուն): Դրա վրայ առաջնի նման նոր գծերով ծածկուած մի եզր է գտնուած, իսկ վերջինիս վրայ էլ մի շարք մեծ և ներսը կէտերով լցուած ճանկաեռանկիւնիներ (voluten), որոնց բոլոր ճանկերը գէպի ձախ կողմն են ուղղուած: Այս ճանկերի շարքում, գօտու թիթեղի իւրաքանչիւր ծայրում 3 մեծ և կլոր ծակեր են շինուած, որոնք գօտու ճարմանդների տեղ են ծառայում: Այստեղ վերջացնում ենք մեր գտած զարմանալի կտորի նկարագրութիւնը: Այդ կտորի վրայ բացի կենդանական, երկրաչափական զարգարանքներից և տեղալին կարգաւորութիւնից, ոչ մի բուսական ներկայացման հետք չէ գտնուած: Աղբերի տարածութիւնների ճանկերի եռանկիւնիների մօտ ուրուսն զարգարանքներ էլ կան ներկայացրած, որ նայնպէս ուրիշ գերեզմանադաշտերի գօտէ թիթեղների վրայ էլ է գտնուած. որինակի համար III համարի գօտու և կրճի մեծ թիթեղների և բրնձների վրայ, բայց այդ զարգարանքները միայն երկրաչափական կերպով զարգարուած գօտիների վրայ խառն գրութեան մէջ են գտնուած:

Թեթեղի միջին տարածութեան վրայ ներկայացրած են ջր-բուած ճանկեր և բացի գրանցից արեգակնային անիւ. այդ բաները գեղարուեստագէտներն ուսումնարանական կրթութեան շնորհիւ են ձեռք բերել և այս հանգամանքը գեղարուեստի զարգացման բարձր աստիճանն է ցոյց տալիս:

Բայց եղջերուների երկու միմեանցից տարբեր տեսակի ներկայացման մէջ մի էշմարիտ զազանիք կայ: Որ այս տեսակների տարբերութեան համար գեղարուեստագէտը մի դիտաւարութիւն է ունեցել, այդ ես առաջ էլ փորձել եմ նկարագրել:

Եթէ մի կենդանու ազին դէպի յետ է ընկած կամ մի քանի եղջերուների բներն երկար են, այն ժամանակ պէտք է ենթադրենք, որ գեղարուեստագէտը տարածութեան համեմատ է այդպէս արել. բայց վաղոց կենդանիների շարքի կանաւար փոփոխութեան հակառակ է այս հասկացողութիւնը: Գեղարուեստագէտն այդ պատկերը նկարելուց առաջ այդ հանգամանքն 'ի նկատի պէտք է աւնէր: Կարելի է նայնպէս ընդունել, որ գեղարուեստագէտը գրանով կամնցել է իւր *Cervus elaphus* կենդանիների շարքում փոփոխութիւն մտցրնել: Բայց մի այդպիսի եզրակացութիւն չէ կարող ուզել լինել: Եղջերուների մի այնպիսի տեսակ կամ ցեղ չկայ, որ այդ կազմութեան համապատասխանէր:

Յայտնի է, որ մեր ազնիւ եղջերուների եղջիւրների կազմութիւնը փոփոխական է. այդ եղջիւրը կենդանու հասակից և զանազան դէպքերից ազդոււմ է: Մի այնպիսի յայտնի գիտնական, ինչպէս ֆոն գեր Բորն է, կարծում էր, որ իւր հայրենիքի, միջին Օգերի մօտ, ազնիւ եղջերուներն իրանց եղջիւրների մէկ համեմատ կարելի է երկու ցեղերի (*Rasse*) բաժանել: Առաջին ցեղի բները միմեանցից շատ հեռու են, երկար ծայրեր ունին և նայնպէս մի գեղեցիկ պտակ, որ յաւաթ թիականման է: Միւս ցեղն ունի երկար, բազմաթիւ ժանիքներով բներ, որանք միմեանց մօտ են գտնոււմ և բարձրովն պտակ չունին: Մենք չենք կարող մեր գոտու թիթեղի վրայ ներկայացրած եղջերուներն երկու այդպիսի տեսակ-

ներքի բաժանել, որովհետև այդանց ներկայացրած պատկերները մեզ չեն կարող պաշտպանել:

Այդ անկանան կազմութիւնն ոչ միայն բնորդ փոքրիկ քանակութեանն է վերաբերում, այլ և ճիւղերի ձևին, որոնք բուրբուրին տարրեր են: Որովհետև փոխանակ ազնիւ եղջերուների բարակ, օուռ և կլոր գուրս ցցուած մասերի, լայն, ուղիղ, հարկի և սուր թերթեր են նշանակուած: Այս թերթերի կերպաբանքը լիշեցնում է եղջերուների այն խումբը, որոնց եղջիւրներն աւելի թիականման մասեր կազմելու հակումն ունին, այսինքն էլ—այժեամ, Արամազգի եղն, արագընթաց և հսկայական եղջերուներ: Այս բուրբ տեսակների ճիւղերի և ժանիքների թիակի կազմութիւնը մեծ մասամբ ամբողջ եղջիւրի վերջումն է կենդրոնանում, որտեղ մենք մեր պատկերներում միայն հասարակ սրածայրեր ենք տեսնում: Ազնիւ եղջերուներն աւելի Cervid կենդանիներին են նմանութիւն ցայց առլիս: Ինչ անկարելի է թուում մեր պատկերների վրայ: ներկայացրած լայն ճիւղեր ունեցող կենդանիներն այս տեսակներից մէկին յանկացնել, չնայելով, որ հայկական ֆաունայում այդ կենդանիներից շատերը չկան: Պարսն ֆուն Մարաէնան իւր ժամանակի իմ Կարանի մասին գրած աշխատութիւնից Կովկասի մեծ և լայնի կաթնասու կենդանիների ժողովածուն է կազմել: Նրա հաւաքածուի համեմատ հարաւային Կովկասում բացի ազնիւ եղջերուից էլ-այժեամ էլ է պատահում: Ելիսվալդն Արամազգի եղն խիսկան Կովկասի համար է ներկայացնում: Հարկաւոր է այստեղ նկատել, որ ես եւրոպական բուրբ ժողովածուները շատ եմ բրբրել և Megaceros կենդանու ոչ մի հետքն այն տեղերում, նոյնպէս և Պարսկաստանում չեմ գտել, այսինքն այդ կենդանին ոչ առաջ է այնտեղ եղել և ոչ էլ այժմ կայ: զոնէ այդպէս է հաւանական:

Արևելքի մեծաղի գեղարուեստագէտներն այն եղջերուներին, որոնց թիակի կազմութիւնը բնորոշ է, բուրբուրին ուրիշ տեսակ են պատկերացրել: Յիշենք այստեղ ընկած Արամազգի մի եղնի այն մեծ պատկերը, որ նկարուած է մի մեծ

սակեայ թերթի վրայ և որ Պալատաւ նահանգի Ռոմիճի մօտ գտնուող մի մեծ կուրգանումն են գտել: Դրա պատկերը գրաֆ Ալէքսեո Բորբինսկին իւր գեղեցիկ հնագիտական աշխատութեան մէջ գետեղել է:

Այդ կենդանու եղջիւրի երկար բունը Կալաքենզի եղջերուների եղջիւրների բներին նման է: Դրա բունը միևնոյն ժամանակ բաժան բաժան է, որովհետև իւրաքանչիւր մասը կեռ ճիւղի է փոխուում: Բնի վերջում քիչ լայն թիակն է տարածուում, որից 5 ծուռ, երկար և սուր ճիւղեր են գուրա գալիս: Այսպիսի մի ներկայացումն ամենաթեթև նմանութիւն անգամ չու՛նի մեր լայն ճիւղերով եղջիւրներին, բայց այդ բանը բոլորովին յիշեցնում է յաճախ à jour Սիբիրի բրնձկների վրայ ներկայացրած Արամազդի եղան ֆիզուրներին: Ես ուզում էի միշտ գօտիների պատկերների համար մի կողապար գտնել, այդ հարցը պարզելու համար ես շատ անգամ գերմանական ժարգարանական ընկերութեան գլխոււոր ժողովներին եմ առաջարկել: Առաջին անգամ 1889 թ. Վիեննայի ժողովին: Այն ժամանակ ես նկատեցի, որ անկանոն եղջերուի եղջիւրն առաջին հայեացքից Արամազդի եղն է յիշեցնում: Բայց յետոյ վճեցի, որ այդ լայն և եռանկիւնի ժանիքները, որոնք միմեանց յետևից երկար եղջիւրների բների վրայ են նստած, Արամազդի եղն չու՛նի: Ուրեմն գրանք երևակայական եղջերուներ պէտք է լինին: Վիեննացի, այդ գործին մօտ ծանօթ գիտնականներն ընդունում էին, որ այդ բանը նոյնպէս հսկայ եղջերուի մօտ էլ է պատահում: Բայց նրանցից ոչ ոք չգիտէր Սև ծովի հարաւային կողմում այդ կենդանու գայութեան մասին:

Հետևեալ տարին ես Միւնստերում խօսեցի այս հարցի մասին. Կովկասի ֆաունան կենդանական Ասիայի ֆաունայի հետ ոչ մի յարաբերութիւն չէ ունեցել: Մոնղոլստանում, Սիբիրում և մինչև անգամ Զինաստանում այնպիսի առանձնայատկութիւն ներկայացնող եղջերուներ կան, որոնց եղջիւրները բոլորովին ուրիշ անսակ կազմութիւն ունին: Յուշային միայն այն է, որ արևմտեան Նիբոլայի թանգարան-

ներում համեմատութեան համար քիչ զօրծաղրելի նիւթեր կան: Բայց եւ պարսն նօսքի համառօտ նկարագրութիւնից իմացայ, որ վերին Ուսսուրիայի Դուբովկիի Cervus-ը անսովոր և զօրեղ մի եղջիւր ունի, որ լայն եռանկիւնանի հիւքերով էրկեր ունի: Հետեւեալ Յ Ֆիզուրներն այդ աշխատութեան համեմատ է ներկայացրուած: Երբ եւ 1890 թ. Փարիզումն էի, այն ժամանակ օթնտեղի բուսարանական այգու ժողովածուի մէջ Cervus mandshuricus-ից մի հատ գտայ, որ առաջինն շատ նման է կազմուած, բայց նրա նման ոչ շատ զօրեղ: Այս կենդանու մի սպիտակ գծով նշանակուած ազին աւելի շատ երկար է, քան մեր եղջերուներինը: Միայն մի կէտում այս երկու տեսակների եղջիւրը Կալաքենցի նկարից տարբերում էր, բներն ուղիղ չէին, այլ կոր: Բայց եւ չեմ կարող ասել, որ մեր գօտու թիթեղի կազապարը գանուած է: Այդ հարցը զեռ շատ պէտք է ուսումնասիրել:

Վիեննայում Կալաքենցի եղջերուների պատկերների մի ուրիշ առանձնախազութեան վրայ էլ ուշադրութիւն դարձրի, այն է բերանների զարմանալի փերպարանքի վրայ: Կընճիթն անկիւնանի է, վերին շրթունքը յետ ընկած և կոր կարուած է: Կնճիթից առաջ մի երկար, շշի և քտակի ձևով առաջ քաշուած փամփուշտի նման մի յաւելուած մաս էլ կայ: Իմ կարծիքով այս փամփուշտը վաղուց կենդանիների գուրս եկող շունչն է ներկայացնում: Եւրոպայի բրանզների վրայ ներկայացրած կենդանիների պատկերների վրայ էլ են այգպիսի փամփուշտներ պատահում: Ես մտածացոյց եմ անում արքունական թանգարանի մեզ համար կայացրած մասնագիտական ցուցահանդէսների Հալշտետի գանազան Situlac-ի և ուրիշ բրանզների վրայ, որոնք Գրունլանդիայումն են գանջուում: Իբրև մի զերազանց օրինակ է ծառայում Մօրիացիների (Մերան) բրանզեայ ամանների վրայ ներկայացրածը: Այստեղ, ինչպէս և արևմտեան Եւրոպայի բրանզների մեծամասնութեան վրայ, ձիեր կան ներկայացրած, որոնք սխալուած փամփուշտ ունին իրանց բերանում: Պարսն Փոն Վիզերն էլ ինձ հետ համաձայն է: Պարսն Մօրից Հէօրնէտը հալշտա-

տեան գերեզմաններում տանձառն մի բոժոժ է գտել, որ մատանու և շղթայի վրայ է գտնուում. նթէ այդ բոժոժը in situ նկարենք, այն ժամանակ մի շփամփուշտի պատկեր գուրս կը գայ: Բացի գրանից ձիւ վրայ էլ է փամփուշտ պատահում, եթէ այդ ձին հանդիստ գրութեան մէջ է գտնուում: Ես ուզում եմ նկատել, որ արէնզէի (Trense) հետ ճիշտ կապակցուած մի տանձառն բոժոժ ոչ միանգամ չենք գտել, բացի գրանից շնչի տեսանելի շողին ոչ թէ կենդանու աշխատութեան մասին է վկայում, այլ արտաքին ոգի յարարերական ջրտութիւնն է յայց ապիս: Ուրիշ կերպ արէնզէն եղջերուի վրայ չէր պատահել: Պէտք է նոյնպէս նկատել, որ այդ շփամփուշտի վրայ էլ կէտեր կան, ինչպէս և կենդանիների մարմնի որոշ մասերի վրայ: Այն ժամանակ բնական գրութեան անհեթեթ շփագանցութիւնն կը լինէր: Որքան քիչ էլ ես ուրանամ, որ այդպիսի մի ենթագրութիւն կարելի է, բայց և այնպէս ես շեշտում եմ, որ զրա համար մեզ նմանութիւնները պակասում են: Մարիայինկի արկղի գօտեթիթեղի վրայ ներկայացրած եղջերուները նոյնպէս չէ կարելի գրանով ճանաչել. թէև նրանց եղջիւրները Կալաքենդի ազնիւ եղջերուների եղջիւրների հետ ամեն մի կէտում համաձայնուում են: Այս եղջերուների բերաններից առ առաւելը թելի նման մի բան է կախուած, որին պարոն Հէօրնէօր մի որ և է էշմարիտ բոյսի տեղ է ընդունում: Սրանց համար ես յետոյ Անդր-Կովկասի միւս գօտիների թիթեղներից զուգահեռ օրինակներ պէտք է բերեմ:

ՊՏՄԸ II (ԳԵՍ ՄԵՆՈՒԹԵՆՄԸ I ՆՈՒՏԵՆՈՒ ՎՐԵՏ ԿԱՐՈՒԹՅՈՒՆ)

Այս նշանաւոր, բայց գժրազգարար փշրուած կտորը 1890 թ. յունիսին գրախտային ամբոցում գտնուող 59 համար գերեզմանում պարոն Բեւլքն է գտել: Այդ գերեզմանում բացի մի կմախքից 3 կուռայ ամաններ, տարբեր կազմութեամբ և գոյնի մարգարիտներ և երկաթեայ նիզակի ծայրերի մնացորդներ էլ են գտնուել: Այդ գօտու թիթեղի առանձին մասերը մենք կրկին պարոն Սլբիիս որոշման հա-

մեծառ ենք միացրել: Դրա վերևի եզրի երկու կտորները գրեթէ կառարեալ կերպով մեր մեռքն են ընկել: Այդ գոտու ծայրերի մնացորդներն էլ ունինք, որոնք գոտին կապելու համար գազափար են տալիս: Այստեղ ամբացնելու համար կան նոյնպէս ծակեր, հաւանական է, որ գրանցից իւրաքանչիւր կողմում երեք հաս են եղել:

Որովհետեւ այդ թիթեղը 16 սանտիմետր լայնութիւն ունեցած պէտք է լինի, դրա համար այդ թիթեղի վրայ պատկերաւոր գեղարուեստի համար շատ տեղ պէտք է եղած լինի: Գեղարուեստագետն ոգտուել է գրանցից և այդ թիթեղի վրայ որսորդական մի տեսարան և միևնայն ժամանակ գաշտափայլի վայրենի կենդանիների մի պատկեր է ներկայացրել: Այդ թիթեղի վրայ բուսականութեան, սարերի և ջրի հետքեր չկան. դրա համար մենք վերացականութեամբ այդ տարածութիւնը մի անապատի կամ անտառի տեղ պէտք է ընդունենք:

Որպէս զի մենք այդ տեսարանի մի մասաւոր գազափարը կազմենք, դրա համար իմ նկարիչն այդ կենդանի էակների և տեղ բանոց գորգարանքներն ՚ի միտսին է հաւաքել (Ֆիգ. 4 եր. 34) և գրանցից մի ամբողջ պատկեր կազմել (Տախ. I. համ. II): Մարդ իսկայն նկատում է, որ այդ կենդանի էակներից շատերը չորքոտանիներ են. բացի գրանցից կան նոյնպէս երկու թռչուն և օձեր և գրանք մեծ մասամբ այդ թիթեղի տարածութիւնը լցնելու համար են այդտեղ ներկայացրուած: Այդ բոլոր պատկերները մի սուր գործիքով են փորագրուած:

Սկսենք չորքոտանիներից: Այս բոլոր կենդանիների ամբողջ մարմինը խիտ կերպով գծերով ծածկուած է: Այդ թիթեղը չրջապատուած է մի եզրով, որի մէջ կրկնակի հիւսուած զարգարանքներ կան: Եզրի ներք կոր գծերով լցուած է: Բայց կենդանիների մազերը (վարսեր) չեն երևում, այլ միայն կապերը: Այս կապերը շատ անզամ կենդանիների մարմնի առանձին մասերը միմեանցից բաժանուելու համար են նշանակուած: Այդ կապերը թիթեղի տարածութիւնն էլ

են ասորքեր մասերի բաժանում: Կենդանիների մարմնի ծայրի անդամներն (որ. ոտները, կառնքները, գլխի առջևի մասերը) զձեռով չեն ծածկուած, այլ բուրբոսովն զատարկ են թողնուած: Այն ինչ միւս բուրբ մասերը միշտ այդպիսի զձեռով են ծածկուած: Այս կենդանիներից շատ քչերը բուրբոսովն իրէպական են ներկայացրուած, մանաւանդ շների խումբը (13, 14): Դրանցից երկուսն իրանց բարձր, երկար, զօրեղ և ծուռ ազիով այլքի են ընկնում: զբանք ունին մեծ ափանջներ և բաց բերաններ: Այդ շները բուրբը ցատկուած են: Թիթեղի միջին ասրածութեան մէջ մի քանի կենդանիների մասեր էլ են երևում, որոնք, հաւանական է, շների մարմինների մասեր պէտք է լինին:

Յետոյ գալիս են եղջերուները: Դժբազարար զբանցից միայն երկուսի մարդղ եղջիւրներն են նկատելի, մի մնացորդի վրայ նկատելի են և մի երրորդի ճիւղերի վերջերը: Միայն մի կենդանի (7) է մարդղապէս մեզ հասել: Դրա զօրեղ եղջիւրը լաւ է ներկայացրած և երկար տանիքներ ունի, որոնցից վերջինը ստատառաքաղի ձևով է բաժանուած:

Դրանցից յետոյ այնպիսի կենդանիներ են գալիս, որոնք բուն վեթիտերի (Gazelle) նման են, թէև անհաւանական չէ կարծել, որ զեղարուեստագէտը կամեցել է այժեղջիւրներ նկարել: 8-րդ համարն իւր զէպի բարձր ուզղած երկար և միայն վերջում հանկամնան իւր եղջիւրներով նման է մի այժեղջիւրի. այդ կենդանին արագ վազում է. զրա ազին բարձր է և ոտները զէպի առաջ ձգուած: 9-րդ համարում եղջիւրներն սկզբում ծուռած, իսկ վերջում աւելի ուղիղ են. այդ կենդանու եղջիւրները զէպի մէջքն են ընկած, թէև զրա գլուխն շատ ուղիղ է: Այս բացասական մանրամասնութիւններին լպէտք է նշանակութիւն տալ, որովհետև այդ կենդանին մեզ վրայ զեղեցիկ տպաւորութիւն է թողնում:

Դրանցով զբէթէ վերջանում է բնայխտական Ֆիզուրները շարքը: Միւս ստատիկներից երեքը (10—12) ձիերի նման են, թէև զբանց մարմնի միայն առջևի մասերն են մեզ հասել: Այդ կենդանիների գլուխները շատ բնորոշ են: Մագերի ծուռ

բաշքը, որ դեպի հակասան է ցած ընկած, չպէտք է լինել: Դրանց ականջները չեն ներկայացրած, բայց աչքերն իրանց ձևի համեմատ ձիւ աչքերին են նման:

Յետոյ սկսում է երևակայական կենդանիների շարքը: Յիշենք ամենից առաջ մի գոմէշ-ձի, որն երկար ազի և կար եղջիւրներ ունի: Գտաւ աչ և ձախ կողմերում երեք երեք այգպիսի խառն կերպարանքներ կան, որոնք մի շարքումն են զբուած և աշխատում են իրանց պաշտպանել: Դրանց մարմնի առջևի և յետևի մասերից շատերը պակասում են: Այս թիթեղի տարածութիւնը պատկերներով լցնելու համար մի գոմէշ գլուխ էլ է պատկերացրած: Այդ գլուխը նկատողութեան արժանի է, որովհետև զա եղջերուների գլուխների նման en face է նկարուած, թէև բոլոր յորքոտանիներն in profil են պատկերացրած: Բացի գրանից գրա վրայ մի խառն կերպարանք էլ կայ, որին ես բռնող ձի եմ համարում (2—6): Այդ կերպարանքը պատկերի վրայ 10 անգամ պատահում է: Այդ կենդանին կարճ, հաստ և ուղիղ գլուխ, մեծ աչքեր, բութ նման ականջ և գազանի գունչ ունի:

Դուռնը սուր ծայրեր ունի: Ձեռքերով որ գոմէշ-ձին զօրեղ սմբակներ ունի, բայց բռնող ձիւ ոտները թռչունի ձևով բարականում են. վերին անգամները (մասերը) խոնարհուած են, բայց մեծ մասամբ գեռ չնշանակուած: Այդ կենդանիներից շատերն (4, 5) իրանց յետևի ոտների վրայ երկամբականու կազմութիւնն են ցոյց առնու: Այստեղ ներանական կազմութիւն չեմ կարող գտնել. բայց ազիի կազմութեան մէջ մեծ բազմազանութիւն է տիրում: Այդ ազին երկար, զօրեղ և S տառի ձևով կորացած է. միայն մի անգամ պատկերի մի նեղ տեղում այդ ազին կարճ և ուղիղ է. մի ուրիշ պատկերում (5) ազին ուղիղ մազերով է վերջանում. մի ուրիշ անգամ ազին միևնոյն վերջաւորութիւնն ունի և S տառի ձևով թոյլ կերպով կորացրած է (6): Միւս կենդանիների ազին վերջաւորութիւնը լայն նիզակի ձևով մարմին է կազմում (2): Ետա անգամ ազին նետի նման կրկնակի ձանկերով (4) է վերջանում: Այդ ազին երբեմն առիւծի ազին է լինեցնում:

Իսկ ինչ երկու թաշուններին (Համ. 16, 17) է վերաբերում, գրանք մեծ մասամբ մեզ չափեր են լիշեցնում: Այդ թաշուններն ունին փոքրիկ գլուխ, երկար, գեպի առաջ ընկած կուռց, երկար և բարակ վիզ, իլառև իրան, երկար ազի և բուրբուկին բարակ և երկար սաներ: Օձն (18) ունի մի Հաստ, Տ առտի ձևով թեքում և բութ մարմին, մի մեծ և երկար գլուխ և լայն բերան:

Դասու աջ ծալում մի մարդ (15) է ներկայացրած, որ ինչպես երևում է, կանգնած կամ քայլում է. նրա ձեռքերը բարձրացրած են. նա իւր աջ ձեռքում մի իր ունի բարձր պահած, որ կենդանու կաշուց սրաբաստած մի վահանի նըման է երևում: Զախ ձեռքը վաս եղանակից ոչնչացել է:

Որովհետև այդ մարդու պատկերը լեռուից է նկարուած, գրա Համար գլուխը լրացրած չէ. այդ գլուխն ուղղակից կերպով երկար և զարեզ վզի վրայ է ընկած. գրա իրանն երկար է. մարմնի միջին մասը նեղ, իսկ կրծքի և կոնքի մասերը լայն. ամբողջ մարմինը ծուռ զուգահեռական գծերով է ծածկուած: Այդ մարդու մարմնի միւս մասերը կոր զուգահեռական գծերով են ծածկուած, որոնք այնպիսի ազաւորութիւն են թողնում, իբր թէ այդ մարդը զրահաւորուած է: Բայց գրանք բուրբու նկարչական զարգարանքներ են: Այդ մարդու կոչանման սաները կարող են նասուրալիստական լինել:

Այս գեղարուեստագէտի նկարած պատկերի բովանդակութիւնը մի միութիւն է կազմում: Որսորդը, որ ձախ կողմում իր շներէ հեռ կանգնած է, գեռ իւր գործը չշմարիտ կերպով չէ սկսել: Նա իւր վահանով մի բռնող միւսց պաշտարանում է. շները հետևեալ եղջերուններէ խմբի վրայ Հաշում են, եղջերուններից մեկն ուղղակի գեպի շներն է գառնում, որոնցից մեկը (14) գուցէ եղջիւրից վիրաւորուել է, միւսը, որ մինչև այս ժամանակ գոմէշ-լիւրի հետևեալ խմբի հեռ կուում էր, գլուխը գեպի որսորդներն է գործընում: Գոմէշ-լիւրի շարքում հակառակ ուղղութեան մէջ մեծք մի շարք կասաղի բռնող լիւր ենք նկատում, որոնց

վրայով մի նալ է թռչում. ընդհատական կենդանիները—այժմեղջիւրներն և ձկները փախում են: Մի շուն վիրաւորուած է երևում: Բայցը յառաջ են գնում, բայց նորից մի շարք բռնող ձկերի են հանդիպում, որոնք յառաջ են գալիս: Յետայ գալիս է եղջերուների և այծեղջիւրների մի նոր շարքի սեռաբանը, որոնք գէպի առաջ են ցատկում, այսինքն գէպի գոմէշ-ձկերի մի նոր շարքը: Թիթեղի ձախ կողմը բուրբոյնի գնասուած է, այնպէս որ այդ գործողութեան ելքը չենք կարող իմանալ:

Կենդանիների մէջ տարածութեան վրայ զարգարուած ուրիշ կենդանիներ և նկարներ էլ են պատկերացրած, այդ կենդանիները միայն տարածութիւնը ծածկելու համար են մացրուած:

Թիթեղը բուրբոյնի ծածկուած է կենդանական գծերով: Այդ գծերն երբեմն կիսալուսնի ձևով են:

ՀԱՅԵՐ ԱՆՆԱԿԱՆ ՎՐԱՅ ՆՅ ՄԵՆՈՒԹԱՆԵՐԻ ՆՊԵՐՈՒՄԻ

1889 թ. Հոկտեմբերի վերջում նկարն Բելքը գրախոսութիւն ամբուլթեան յետ գտնուող մի մարզագետնի վրայ 3 գերեզմաններ բաց արեց, որոնք երկրի մակերևոյթից 0<sup>m</sup>. 5—0<sup>m</sup>. 6 խորութիւն ունէին: Դրանցից մէկում (ՁՆ 47) երկու մարզկանց և մի ձիու ոտներ, 6 ամաններ և կաւ երկու պնակներ կային: Բացի դրանից այդտեղ գտնուեցան բրնձից պատրաստուած ձիաների սարքեր, ձեռքի 4 օղեր, 2 նեախի ծայրեր և այլ համարով գոտէ թիթեղը: Այդ գերեզմաններումն են գտել և մի երկաթեայ սուր, 2 նիզակների ծայրեր և մի մեծ, հարթ և շրջանակաւ կտնակ:

Դտնուած գոտէ թիթեղը գեղեցիկ է և 12<sup>cm</sup>. 5 լայնութիւն ունի: Դրա երկու ծայրերը կորել են: Թիթեղի միջին տարածութեան վրայ մի խաչ է նշանակուած. զրանից կարելի է եղբակացնել, որ այդ գոտէ թիթեղը բուսականին երկար է եղել: Դրայ վրայ գտնուած սուր և խոր փորագրութիւնը 11-րդ փորագրութիւնն է յիշեցնում. այդ երկու թիթեղների նկարը նայնպէս միևնոյն է:

Դատու միջին տարածութեան վրայ նշանակուած են բազմաթիւ՝ միմեանց Հեա կուսուղ շորքտանիներ, որոնք բարբ բացառապէս երևակայական են: Այդ կենդանիների մէջ միայն մի քանի բէալիստական թռչուններ և մի օձ կան: Բացի դրանցից թիթեղի տարածութիւնը լցնելու Համար մի քանի՝ միմեանցից տարբեր զարգարանքներ էլ են պատկերացըրած: Այդ թիթեղի վրայ փորագրած և կուսուղ կենդանիները Համար II-ի կենդանիների նման խմբերի չեն բաժանուած, այլ դրանք միայն առանձին առանձին են կուսում: Դրանց կարելի է գանազան տեսակների բաժանել:

Այս թիթեղի առանձնաբաժանութիւնն այն է, որ սրա վրայ Հրեշտիկ կրկնակի կենդանիներ են փորագրուած, որոնք ազիի փոխանակ երբեմն, երկար վիզ ունին: Դրանց վիզ վրայ գանուած գլուխը նոյնպէս նկատելի է: Երբեմն աւելի փոքրիկ մի կենդանու վիզն ու գլուխը գլխաւոր կենդանու վիզից ու գլխից աւելի մեծ է: Դրանց գլուխները միևնոյն կազմութիւնն ունին և անկասկած ախտաբանական գուրջիցիտոտի մի տեսակն են ներկայացնում:

Դրանց կարճ իրանը, զօրեղ վիզը, երկար ու լայն ախանջներն և զարգարուած և մի քիչ ձգուած սմբակները կարելի է շուտով վայրենի իշին քան վայրենի ձիուն վերագըրել: Շատ Հասարակ կերպարանքներ իրանց երկար սաներով այդ միևնոյն կաթեզորիային կարող են պատկանել: Դրանցից շատերը կիսաերկար՝ գէպի ներքև կամ վերև ընկած ազիներ ունին: Ախանջների շարժողութիւնը պարզ կերպով արտայայտուած է: Երանդ-ձիաներն իրանց գլխաւոր կէտերով Համար II-ի կենդանիների նման են ներկայացրած: Միայն դրանց ծուռ պոզերն աւելի զօրեղ են, այնպէս որ դրանք մեզ վրայ աւելի առաջնակարգ տեսակի տպաւորութիւն են թողնում: Դրուխներն անհամեմատ բարակ և փոքր են, իսկ բաց և սուր ծնօտները թռչունի կազմութիւնն են լիշեցնում: Այդպիսի բան կրկնակի էշերի գլուխների վրայ նոյնպէս կարելի է նկատել:

միևնոյ ձիաները նոյնպէս իրանց էական կէտերով

Համար II-ի կադապրոզն են: Բայց այդտեղ մի քանի առանձնայատկություններ էլ կան: Համար II-ի աչքը գեպի ձախ է ընկած. դրա վրայ կայ նոյնպէս մի յաւելում՝ մաս: Այդ կենդանին մի հասա ազի ունի, որի վերջում երեք ժանիքներ են գտնուում. մինչդեռ միւս երեք կենդանիները ծուռ, կարճ, հասա, բոլորովին բուժ և կարուած ազիներ ունին:

Թիթեղի տարածութեան միջին մասում շատ կենդանիներ կան, որոնք այժեղջիւրների նման պոզեր ունին. այդ պոզերի վրայ խորթ ու բորթ մասեր էլ են նկատուում: Այդ կենդանիներից մեկը մի կարճ, շատ հասա և բուժ ազի ունի: Դրա վզի վրայ մի կլոր և ձուածն մաս էլ կայ, որ ինչպէս երևում է պանջն է ցոյց տալիս: Այս բանն ընդունելու համար իջրև նշմարիտ ապացոյց ծառայում է և այն փաստը, որ միւս երկու կենդանիների միևնոյն տեղում էլի մի այդպիսի մաս կայ, որ հաւանականորէն պանջն է ցոյց տալիս: Այժեղջիւրի մի գլուխ *Agroceros* կենդանու նման հարթ և քիչ ծուռ պոզեր ունի: Բացի գրանից այդ թիթեղի տարածութիւնն ամբողջովին զարգարելու համար երկար և զօրեղ պոզեր են նշանակուած, որոնք գեպի առաջ և գեպի յետ են ծառուած: Այդ պոզերը վիթերի պոզերն են յիշեցնում: Այժեղջիւրների աչքերը մեծ են և գեպի առաջ ընկած:

Այստեղի երեք թռչունները համ. II-ի թռչուններից բոլորովին տարբեր են: Դրանք բոլորը հոծ կերպարանք, սաստիկ կլոր ժարմին, լայն և ուղիղ կարուած ազի ունին: Կարճ և հասա վզի վրայ փոքրիկ աչքերով կլոր գլուխն է նստած: Այդ բոլոր թռչունների կտուցը մի քիչ ծուռ և համեմատաբար աւելի երկար է. աջ կողմում գտնուող թռչունի կտուցը բոլորովին բարակ է, իսկ միւս երկուսինը համեմատաբար աւելի հասա: Բոլորի կտուցները սուր են, իսկ ունները շատ հասարակ: Ուղիղ կամ բուժ անկիւն ներկայացրնոյ գծեր են նշանակուած գրանց սաների տեղ: Եթէ գրլանք ազաւաներ չեն, այն ժամանակ հակառակ գեպում գրանց լորտաղէներ պետք է ընդունել: Որովհետև այդ թռչունները հանգիստ և կրաւորական զբոսիւնան մէջ են,

գրա համար պետք է բնդունենք, որ գրանք թիթեղի զարգարանքը լրացնելու համար են այգտեղ ներկայացրած:

Ճախ կազմի միակ օձը կարճ և հաստ է և մի շատ լայն գլուխ ունի: Այդ օձն այնպէս է ներկայացրած, իբր թէ զա մի բանոզ ձիու հարծքն է կծում, իսկ ձիու լայն բացուած բնրանից կարելի է եզրակացնել, որ զա օձի ազին ուզում է բռնել:

Թիթեղի վրայ տարածութիւն բանոզ զարգարանքներից իւր մեծութեամբ և նշանակութեամբ առաջին տեղն է բռնում զրա աջ կողմում գանուոզ խաչը, որ լայն և միմեանցից հեռու ճիւղեր ունի: Մի հիասքանչւող մեկնիչ գուցե կարողանար և այն բանը մեկնել, որ զա գամէշ-ձիու երկու պողերի մէջ է գրուած: Բայց մեզ համար մի մեծ անհաճութիւն է բացում, որովհետեւ այդ խաչի աջ կողմում գանուոզ երկար պատկերի վերեւը չկայ, զրա համար մենք չենք կարող վերոյիշեալ հանգամանքը մեկնել: Մենք չենք կարող նոյնպէս որոշել, թէ ձախ կազմում գանուոզ պարզ աստղն երկնային աստղերէջն է, թէ մի որևէ ուրիշ բան:

Տարածութիւն բանոզ զարգարանքներից յիշենք անկիւնների երկու կէտերով շեղանկիւնիները, մի անգամ համ. X-ում յիշուած առաջատամացոյցի նման պատկերը, մի ուրիշ անգամ էլ համ. II-ում (Ֆիգ. 4 համ. 27 համեմատել ծուռ թելերի փունջը: Բացի գրանցից յիշենք և աջ կազմի պարզ և գէպի իւրացանչիւր կազմն երկասյրի Ֆիգուրը:

Բացի վերոյիշեալ սակաւաթիւ պարզ նկարներից, մնացածները կէտերով, խաչաձև գծերով և զանազան տեսակ օրնամենաներով են զարգարուած և իրանց էական կէտերով այն զարգարանքին են համապատասխան, որի մասին համար II-ում մանրամասն խոսեցինք:

Մեր առանձին ուշագրութեանն արժանի է փառաւոր և լայն եզրների այն զարգարանքը, որ թիթեղի միջին տարածութիւնը շրջափակում է: Այդ զարգարանքը սկսում է գառարի եզրից մի քիչ հեռու գանուոզ ժապուէնից, որ խիտ

կերտող կարճ, ծուռ և զուգահեռական գծերով լցուած է: Դրան հետևում է մի գեղեցիկ, շատ լայն և շարունակուող ուրբուն զարդարանք, որ հասարակ և զուգահեռական գծերով ծածկուած է: Յետոյ այդ սարածութիւնը լցնելու համար եռանկիւնիներ են նշանակուած, որոնց ներսում կէտեր, իսկ անկիւններում շրջաններ կան: Դրանց հետևում են մի շարք, զէպի ներս բացուած կիսաշրջաններ և վերջապէս զէպի միջին սարածութիւնը բազմաթիւ հասարակ գծեր:

ՁԵՐ. IV (ՆՅՑ ԻՆՏԵՐՔԱՅԵՐ II ՏԵՄԵՐՆԵ ՎԵՏ ԳՈՐԾ ՔԵՐՈՒՄ)

1890 թ. յունիսի 25-ին պարոն Բեւլըր Կալաքենդի գըրախտային ամբուլտեան մաս գտնուող 98-րդ գերեզմանը բաց անել առեց: Այդտեղ գտնուեցան 3 կմախքներ, կաւէ 6 ամաններ, իսկ բրոնզից պատրաստած հետևեալ բաները. կըռուելու համար մի հարթ ապար, 3 նետի ծայրեր, ծայրերը սրած մի քերիչ, գլխի ուրած մի օղ, ձեռքի 2 օղեր, կախելու 2 հարթ իրեր, 2 կոճակներ, լայն գլուխներով 2 բևեռներ, ապակեայ և գարնէօլից պանարաստած 59 մարդարիաներ և գոտու թիթեղի մնացորդներ, որոնց մասին շուտով պէտք է խօսենք: Բայց դրանցից այդ գերեզմանում գտնուեցան նոյնպէս երկաթից պատրաստած նիզակի ծայրեր:

Դուռ այդ թիթեղը շատ սղորմելի գրութեամբ է մեզ հասել:

Այդ թիթեղի 5 բոլորովին փոքրիկ մնացորդները մեր ձեռքն են հասել, որոնցից միայն յարսն է մեր պատկերի վրայ ներկայացրած և զբանք բոլորովին մի նոր կոմբինացիա են ցոյց տալիս: Այդ կոմբինացիան կենդանիների Ֆիզուլենբրով մի հարուստ զարդարանք է ներկայացնում, որի նմանը մեզ մինչև այժմ ոչ մի տեղ չէ պատահել: Բայց սրովհետև այդ թիթեղի եզրի միայն մի մասն է մեզ հասել, իսկ միւս մասերը կորել են, զրա համար մենք չենք կարող այդ թիթեղի մասին մի ամբողջ գաղափար կազմել: Միայն կարելի է նկատել, որ այդ թիթեղի երկարութեամբ մեծ սուրանկիւն եռանկիւնիներ են նշանակուած, զբանք համ. XI-ի սուրան-

կիւն եռանկիւնիներէ նման են: Բայց առաջին սուրանկիւն եռանկիւնիներն աւելի հարուստ կերպով են կազմուած և բացառութեամբ գրանց կողքերին կենդանիներէ ֆիգուրներ են նշանակուած:

Այսինք այդ կենդանիներից, որոնց փոքր կամ մեծ մասերն մեր երեք մնացորդների վրայ ներկայացրած են: Աերջին աջ մնացորդի վրայ մի կենդանու միայն ազին և յետևի սոսի կանաուրի մի մասն են մեզ հասել: Երկրորդ մնացորդի վրայ տեսնուած են ազին և մարմնի յետևի մասը, իսկ երրորդի վրայ (ձախ կողմի) կենդանու նկարի երկու ֆրագմենտները: Այդ ֆրագմենտներից ներքևինը ներկայացնում է գլուխը, գիզն և իրանի մի կտորն առջևի աջ սոսի մի մասի հետ, իսկ երկրորդը կենդանու մարմնի յետևի մասը, բայց առանց ազիի:

Այդ պատկերի մնացորդներից մենք կարող ենք եզրակացնել, որ այդ կենդանին երկար ճիւղաններով մի գազան է ներկայացնում, որ իւր գլխոււր մասերով վազրին է համապատասխանում: Այդ գազանի զօրեղ իրանն իւր ամբողջ տարածութեամբ կապերով է ծածկուած, իսկ վերջիններս էլ ծուռ գծերով են զարգարուած:

Առանձին կապերը բոլորովին առանձնայատուկ ձևով մի քիչ կոր գծերով են լցուած, որոնք միմեանց վրայով են անցնում, այսինքն ուսանա գծեր են կազմում: Մի զոյգ աւելի փոքրիկ կապեր սաների վերին մասերի վրայ են գտնուում և երբեմն գծերով փոքրիկ շրջաններ են կազմում: Գծերի ուղղութիւնն ի նկատի առնելով, այդ կենդանին մեզ աւելի շուտ վագրաձին (հին մարդկանց Equus Barchelli.) է յիշեցնում, քան իսկական վագրը, բայց այդ կենդանու երկար, զօրեղ և կոր ազին, կարճ ու լայն բացուած բերանը, գազանի գծագրութիւնն և կարճ ու սուր սկանջները մեզ վրայ ձիու ապաւորութիւն չեն թողնում: Կենդանիների աշխարհագրութիւնն էլ մեր կարծիքին հակառակ կը լինէր: Կարելի է նոյնպէս աւելացնել, որ գրա յետևի սաների վրայ կետերից բազկացած զարդը, սաների վրայ ուղեղ գծերը, սկանջներէ ճի-

բանները վազրի գունաւոր բծերն են ներկայացնում: Բայց այնուամենայնիւ մեզ համար գեւ ևս կասկածելի են մնում, թէ ազիի երկու կողմերից կախուած բաներն ինչ են ներկայացնում: Ազիի վերջին եռանկիւնանի ֆիզուսը նայնպէս ուղիղ չէ երևում: Մի խոսքով այս վազրն այնքան բեւախոսական նշաններ ունի, որ միւս թիթեղների ամենալաւ պատկերների կողքին կարելի է գննել:

Այդ կտորների մնացած զարդարանքը կրկնում է մի շարք այնպիսի կազազարներ, որոնց մասին աւելի հասարակ գտե՛լ թիթեղների մասին խոսելու ժամանակն ենք նկարագրել: Եզրի երկարութեամբ ընկած է մի լայն զարդարանք, որ 4 տարբեր տարրերից է բարդուած: Շատ հասարակ կէտերի մի շարք, յետոյ ուրումն զարդարանքով մի նեղ կապ, զրա վրայ մի շարք ծուռ եռանկիւնիներ, որոնք կէտերով են լցուած: Այդ եռանկիւնիների մէջ երբեմն նեղ մի կապ է գտնուում, որ ծածկուած է խաչուող թեք գծերով (Gitterornament): Մենք եռանկիւնիների գազաթների վրայ կենդրոնական կէտերի շարքից կազմուած զարդեր կան: Աերջապէս ձախ ֆրագմենտի վրայ նկատելի են միջին տարածութեան 3 լայն և զուգահեռական կապերի վերջին կտորները, որոնք Հիւսուած և կէտային զարդարանքերով են ծածկուած:

#### ՆՈՒՄ. V (II ԿՈՒՅՈՒՄ ՎՐԵՑ ՊԵՍ ՄԻՆՈՒԹԱՆՈՒՄ ԼՈՒՐՈՒՅԵ)

Մեզ հասած թիթեղներից վերջինս ամենալաւն է: Այս թիթեղն 72 սանտ. երկարութիւն և 8 սանտ. լայնութիւն ունի: Սրա երկու ծայրերը կլոր են և հաւանական է, որ իւրաքանչիւր ծայրի վրայ ամբացնելու համար 3 ծակեր են եղել: Այդ ծակերից մեզ միայն 2 հաս է հասել, իսկ բոլոր մնացածները փչացել են: Մեզ հասած այդ երկու ծակերը բոլորովին սուր կերպով կլորեցրած և 5mm են: Աերջիշեալ թիթեղի եզրի մաս մի ժապաւէն է նկատելի, որի ներսը կէտերի հասարակ մի շարքով է ծածկուած:

Դեպի աջ կողմը վերևի Հիւսուած շարքում շատ երկար օղեր են գտնուում, որոնց մէջ փոքրիկ շատ շրջաններ կան:

Մնացած տարածութեան վրայ գեղարուեստագէտը Հարթ կիսաշրջաններ է կազմել, որոնց վերջերը միմեանց մէջ են ժանուժ և այդպիսով ողակների տարածութիւնը բռնուժ են: Այս վերաբերում է գլխաւորապէս Հիւսուած երկու արտաքին շարքերին, մինչդեռ երրորդի կիսաշրջանները միջին շարքի վրայ են նստած:

Բայց այստեղ մի շատ աւանմնայատուկ գրութիւն է նկատելի: Վերևի եզրի վրայ, գէպի ձախ կողմն մի կոր թիթեղեայ երէզ է գտնուում: Այդտեղ կան նոյնպէս փակագծեր, որոնք յետոյ չեն աւելացրել, այլ զբանք այդտեղ պէտք է եղած լինին, երբ եզրը փորագրել էին: Որովհետև այստեղից սկսած գէպի ծայրը 6 սանտ. երկարութեամբ Հիւսուած զարդարանքը միայն երկու շարքեր ունի և վերևի կէտերի շարքը պակասում է, մինչդեռ գէպի աջ թէ կէտերի շարքն և թէ երեք տեսակ Հիւսուած զարդարանքներն էլ կան: Բացի զբանցից մի կարճ տարածութեան վրայ էլ մի յաւելուած զարդարանք է ներկայացրած: Վերջինս բազկացած է 10 սանտ. երկարութիւն ունեցող կիսաշրջանների արտաքին մի շարքից: Յետոյ գալիս է մի Հասարակ գիծ, որի ծուռ ուղղութիւնը Հետևեալ կենդանիների ֆիզուրների գրութեան Հետ է յարմարեցրած: Այդ գծի վրայ Հարթ կիսաշրջանների մի նոր, բայց աւելի կարճ շարք է պատկերացրած: Այդ կիսաշրջանների շարքի երկարութիւնը 7<sup>0</sup> 5 է, զբանք բոլորը գէպի ներսն են բացուած: Բայց որովհետև փակագծի վերջը մի կենդանու պոզին է դալում, իսկ յաւելուած զարդարանքն երկու ուրիշ կենդանիների պոզերի ծայրերն է կարում, այն ժամանակ պէտք է ընդունել, որ միջին տարածութիւնն արդէն վերջացրած էր, երբ փակագիծը նշանակուեց, բայց ժապաւէնը գեռ նոր էին շինում: Գեղարուեստագէտի նպատակն է եղել այդ յաւելուած զարդարանքով մի գեղեցկութիւն ստեղծել և այդ ժապաւէնի կորած կտորի տեղը գրել, բայց այդ բանը նրան չէ յաջողուել:

Մայրերի այդ երկու կտորները նոյնպէս զանազան տեսակ են բաժանուած:

Դրա եզրի ժապաւէնները նոյնաչափութեան օրէնքներին են ենթարկուած: Այդ եզրի մօտ կապեր էլ են նշանակուած, որոնցից ամենալաւը կոր զծերով մի զարգարանք ունի, իսկ ներքեւինը ամենեւին զարգարանք չունի: Երբորդ կապը մի սուրանկիւնանի զարգարանք ունի, իսկ վերջինն օձանն մի զարգարանք: Ինչպէս երևում է՝ գեղարուեստագէտը կամեցել է թիթեղի աջ ծայրի վրայ մի գեղեցիկ գեկորացիա ստեղծել, բայց այդ միտքը լծաոյ թողել է, որովհետև այստեղ եզրի զարգարանքը պակասում է: Լիւսխային եզրի անկանոն վերջաւորութեան վրայ 4 աւելի մեծ շրջաններ են նշանակուած: Դրանք քառակուսու ձևով են ներկայացրած: Ներքեւի ժապաւէնն առանց յաւելուածի փակում է: Դրա համար կենդանիների շարքը հասնում է մինչև կյոք եզրը:

Այժմ առնենք միջին տարածութիւնը: Այս տարածութիւնը ծածկուած է մի քանի տեսակ զանազան կենդանիների շարքերով, որոնք մեծ մասամբ թիթեղի գառարկութիւնը լցնելու համար են ներկայացրած: Այդ կենդանիներն աւելի հանգիստ գրութեան մէջ են գտնուում, քան մինչև այժմ նկարագրած թիթեղների վրայ պատկերացրած կենդանիները: Այդ կենդանիներին շատ հանգիստ կերպով կանգնած գրութեամբ պէտք է երևակայել:

Բայց հեշտ չէ որոշել, թէ գրանք մը տեսակ արածող կենդանիների շարքին են պատկանում: Այդ հօտի բոլոր կենդանիներից իւրաքանչիւրն երկու պոզեր ունի. գրանցից միայն մի կենդանի է բացառութիւն կազմում: Դրանց պոզերն ոչ կովերի պոզերին և ոչ էլ եղջերուների եղջիւրներին են նման: Ի նկատի առնելով այդ կենդանիների սեզմուած կազմուածքը, կարճ ոտներն և երկար ու բարակ ազին, չենք կարող եզրակացնել, որ գրանք ընդհանրապէս եղջերուների ցեղին կամ մասնաւորապէս այնեամբներին են պատկանում: Եստ շատ գրանք աւելի նման են մեծ կենդանիներին՝ յամայրներին կամ ոչխարներին: Առաջին կենդանիների համար իբրև սպառցոյ ծառայում են գրանց ուղիղ պոզերը, իսկ վերջինների համար գրանց ամբողջ ունակութիւնն և բրդաթ մորթին: Բայց այդ նշանները համոզեցուցիչ չեն:

Գեղարուեստագէտիս անհաստատութիւնն և անյաջողութիւնն ի նկատի չպէտք է առնել: Այդ կենդանիները մի աշակերտի նկարած պատկերների տպագրութիւնն են թողնում: Այդպիսի բարակ, բոլորովին գծանման և բացի գրանից անառն մի ազի անքնական է: Այդ բոլոր կենդանիների ոսկերչական ամբողջովին չեն պատկերացրած, այլ զբանք միշտ կէս բարձրութիւնից յետոյ կտրուած են: Մինչև անգամ գրանց գրութիւնների տեղը նշանակուած, բայց բոլորովին չէ նկարուած: Այդ թիթեղի մի քանի մասերը փչացել են: Դրա լախ կիսի մի մեծ մասը բոլորովին մաշուած է: Բայց մի քանի կենդանիներ կան, որոնց գլուխները կարող էին նկարել: Այդ բոլոր պահասութիւններն ի նկատի առնելով, գրանց որոշ գիտնողան չպէտք է անել: Բայց մինչև անգամ երեխաներն իրանց բութ պատկերները նկարելու ժամանակ մի որոշ գիտաւորութիւն ունին: Մեր թիթեղի վրայ ներկայացրած կենդանիները մի որևէ ցեղին պէտք է պատկանին և մենք պէտք է աշխատենք մասամբ այն հարցը լուծել, թէ մեր Եգեղարուեստագէտն ինչ գիտաւորութիւն է ունեցել:

Առաջին բույէին կարծեցի թէ կարող էի *Jak* կենդանու (*Bos grunniens*) բնական կաղապարն ընդունել: Մեր կենդանու սաստիկ մազմզուութիւնը, նիհար կազմուածքը, կարճ երկւայոց ոսկերչն և գրա գլխի միմեանցից հետո գանուղ կարճ պոզերն վերոյիշեալ կենդանուն բռնում էին: *Jak* կենդանին մի մեծ վայրենի կենդանի է և գրա հայրենիքը Կովկասից հետո կենդանական Ասիայի լեռնոտ անդերումն պէտք է փնտռել: Յետոյ ուրիշ համեմատութիւններ անելով, բնականաբար մի աւելի փոքր կենդանի ընտրեցի, որի հայրենիքն այդտեղ է:

Յամոյրներից յետոյ միայն *Saiga* կենդանին կարելի էր ի նկատի ունենալ: Այդ կենդանին լաճախ պատահում է արևելեան Աւրոպայի անապատներում, Կովկասեան լեռներում և Կասպից ծովի մասերքում մինչև Ալտայը: Այդ կենդանին առհասարակ ընկերներով է ապրում. աշնան սկզբին նա հազարաւոր կենդանիների հետ թափառում և ապրուայ սկզբում

զբանք զէպի իրանց նախնական բնակավայրերն են վերագառնում: Պալլասը նկատել է, որ այդ կենդանիները բոլորը միասին և միաժամանակ չեն հանգստանում, այլ միշտ զբրանցից մի քանիսն արածում և միւսների վրայ հսկում են և այլն: Նայնպէս առանձին կենդանիների արտաքին տեսքը մեր պատկերի համաձայն կարելի է մի որոշ տեսակի ենթադրել: Այդ տեսքը մեզ իւր կազմուածքով և էութեամբ ոչ խորն է լինեցնում..... Դրանց կազմուածքը կոշտ է, մարմնը հաստ, սեղմուած և համեմատաբար աւելի ցածր. զբանք արագ են վազում: Այդ կենդանիների կաշին երկար և խիտ ժազեր ունի, այնպէս որ այդ կաշին հարթ ըրդեայ ծածկոց է կազմում..... Դրանց պոզերն աչքի խոռոչի վրայ միմեանցից մի քիչ հեռու են գտնուում և աւելի քնարին են նման: Այդ պոզերի ծայրերը բարակ և հարթ են, իսկ զբանց ստորին ժառը զծերով ծածկուած..... Ազին կարճ է և արմատի մաս մի քիչ լայն..... Մեր պատկերների շատ մասերը պահասում են և մենք չենք կարող այդ կենդանիներին առանձնախառնութիւնների հետ ծանօթանալ, բայց պէտք է խոստովանենք, որ զբանց անսամբի մէջ մի որոշ համաձայնութիւն կայ: Ես ուզում եմ նայնպէս ուշադրութիւն գործնել և այն բանի վրայ, որ այդ կենդանիների պոզերի ծայրերը գալարուած գրութիւնից ազատուած են և այդ հանգամանքը մեզ լինեցնում է ծեր լամպրների գրութիւնը, երբ զբանց պոզերի ծայրերն յաճախ կարուած են լինում և մի քանի թելերով վերջանում:

Մեր կենդանիները կարելի է և խիստան ոչխարների հետ համեմատել: Ըստ Պալլասի Կովկասի հոգուական ազգերն են գլխաւորապէս երկարազի ոչխարները սեւացել, բայց ազին արդով բոլորովին ծածկուած է, որի ծայրում առիւծի ազիի նման մի փունջ կայ: Այդ բանը մեր պատկերի վրայ չէ երևում: Նայնպէս պոզերի ուղիղ և հաստ ձևն էլ չէ համապատասխանում:

Միայն զուու թիթեղի մի մասում խոյի պոզերի և զբուխների ապաւորութիւն են թողնում երկու միմեանց հա-

կառակ և Հորիզոնական գիրքով գլուխներ, որոնք իբրև տարածութիւն բռնող իբեր են այդտեղ մայրուած: Այդ թիթեղի պատկերներէց միայն ամենամեծը, որ դրա ձախ ծայրումն է գտնոււմ, Հասարակ կերպով կարացած և զեպի յետ ընկած եղջիւրներ ունի, ինչպէս Saiga կենդանին: Այդ տարածութեան պակասութիւնէց կարող է այնպէս նկարուած լինել: Այդ կենդանին in profil է նկարուած: Բայց զրա եղջիւրները Հասարակ գծերով են նշանակուած: Այդ կենդանու մօտ գտնուող երեք, միմեանց կողքին պատկերացրած գառներն ուղիղ և Հաստ եղջիւրներ ունին:

Մի առանձնապատկութեան մասին էլ լիշինք: Գտու թիթեղի աջ կիսի վերևի շարքի բուր կենդանիները մի Հաստ, Համեմատաբար աւելի գորեղ, երբեմն գնդաձև և երբեմն էլ կանաձև յաւելուած մաս էլ ունին, որ դրանց ուսերի վրայ է գտնոււմ և որի ծայրը մի քիչ կոր և յետ ընկած է: Այն բուր կենդանիներէց, որոնք քիչ թէ շատ մեր պատկերի կենդանիներին նման են, կարելի է միայն Հնդկական ցուլին լիշել: Հնդկացուլի կարճ, բայց շատ ձգուած եղջիւրները մեր գտու թիթեղի կենդանիներէ Հետ կարելի է Համեմատել: Գուցէ գեղարուեստագէտը կամեցել է իւր երևակայութեամբ իտան ձևով մի կենդանի գուրա բերել, որ բնութեան մէջ չկայ: Այդ կենդանիներէ մարմնի վրայ մի գատարկ մաս էլ կայ, որ ուղիղ գծերի կապերով սահմանափակուած է: Մի քանի կենդանիների մօտ այդ գատարկ տեղը թամբի ծածկոցի ձևն և գիրքն ունի: Այդ տարածութիւնը կամ տեղը շատ անգամ կէտային գծերով է ծածկուած: Գուցէ դրանք Հեծնելու կենդանիներ են ներկայացնում: Ինչ բուրովին յայտնի չէ, որ Կովկասում գտնէ մի անգամ Հեծնելու եղնիցից սպառուած լինին: Կարաքենդի գերեզմաններում ձիաների ստները յաճախ են երևացել, բայց դրանց մասին չէ կարելի մտածել: Բացի դրանից յայտնի գիտնական պ. Մէտրիւսն այդ կենդանին մի Հեծնելու կենդանի է կարծում և ուզում է ապացուցանել, որ այդ կենդանու մէջքի վերայ գտնուած գուրա ցցուած մասը թամբի մի կտակ է ցույց

տալիս և գրանց պոզերն զարգարանքի պատկերներ պէտք է ընդունել:

Բայց բուրոզիին ուրիշ սպասարութիւն է թողնում երկու խոյրի մաս գանձող գառանման մի շատ սեղանի կենդանին, որ երկար ու բարակ վիզ և փոքրիկ գլուխ ունի. գառի չունի: Այդ կենդանու բերանից օձանև և երկար գծի նման մի բան է կարուած: Երա ազին միւս կենդանիների ազիին է նման: Ես պոզերի հետք անգամ չունի: Բայց գրա վիզն ու մէջքն եռանկիւնանի մասերով են ծածկուած, որոնց հիմքը միջին գծի վրայ է ընկած: Բուրո ներկայացրած կենդանիներից մեր կենդանին մեծ մասամբ նիհար ձիուն (Mähre) է նման:

ՊՈՐՏ XIV և XV (IV ԹԵՃՈՒՄ ԳՐԵՅ՝, ՆՆՈՒՆ ԲՆՈՒԹԵՐՏ),

Երկու լու մնացորդներ կան, որոնք առանձին ուշադրութեան արժանի են: Հաւանական է, որ գրանք միևնոյն գերեզմանիցն են:

Առաջինն (XIV) անկասկած պատկանում է մի դասու թիթեզի: Եսա լայն և բաւականին վայելուչ կերպով կազմուած եզրի զարգարանքից այնքան է մեզ հասել, որ արտաքին բեկուած մասի վրայ հիւսուած զարգարանքը մնացորդների տեղ կարելի է ընդունել: Այգանեղից գէպի ներս հետուււմ են մի շարք շեղջեր, որոնց ներսում մարդարտի նման շարած կէտուար գծեր կան, իսկ այդ շեղջերի անկիւններումն էլ փոքրիկ շրջանակներ:

Միջին տարածութիւնը, որից միայն մի փոքրիկ մասն է մեզ հասել, ծածկուած է սաստիկ շարժուող կենդանիների ֆիզուրներով, որոնցից միայն մի երկար օձ, երկու թռչուն և 3 չորքոտանիներ կարելի է նկատել: Արովհետև վերջիններից միայն երկուսի մարմնի յետևի մասերն են մեզ հասել, զրա համար կարելի է զրա համաձայնութիւնը №№ II և III համարների երևակայական կենդանիների հետ ստուգել: Հաւանական է, որ գրանք բունջ ձիաներ են եղել:

Թռչուններն իրանց կերպարանքով համար III-ի (տախ-

տակ II)-ի թուշուններն են յիշեցնում: Դրանցից մէկն աւելի մեծ և աւելի շարժուն գրութեամբ է ներկայացրած: Այդ թուշունը մեզ մինչև այժմ լայտնի թուշուններից միակն է, որ թեևերը տարածել է: Անբըջինս մեծ և լիքն կերպով է պատկերացրած և նպղեայ զարգարանքով ծածկուած է: Որովհետև գրանց երկար ու ուղիղ կառուցն և շատ երկար ու բարակ ստները մեզ ջրային կամ աւելի լու է ասել ճահճային թուշուններն են յիշեցնում, գրա համար գրանք կուսնկներ կամ ճայեր պէտք է լինին:

Տարածութիւնը լցնելու համար կոր թելերից բազկացած փնջեր էլ են ներկայացրած:

Թէև հազիւ միևնոյն գոտու թիթեղին պատկանող, բայց միևնոյն տեղից ծագող մի թիթեղի կտոր էլ կարելի է յիշել, որ մի յորքոտանու, ըստ երևոյթին մի շան պատկեր է ներկայացնում: Այդ կենդանու պատկերը բաւական կուրտ և առանց մանրամասնութիւնների է: Դրա վրայ նկատուած է շատ վտիտ և երկար ազիտ մի շան կազմուածքը: Այդ շան կանաւորը կէտերով զօրեղացրած է: Դրա գլուխն երկար և սուր ծայր ունի, տկանջները կարճ, վիզն երկար ու բարակ, բայց շիչ դէպի յետ բարձրացրած է: Առջևի ստները միմեանցից բաժանուած և բարակ են, իսկ յետևինը միմեանց հետ միանալով մի հաստ ըան են կազմում: Այդ պատկերը մեծ մասամբ որսորդական մի շան է նման:

ՊԼՑՄ XVI (ՅԵՒՅԵՆ IV, 2), ՔԼՈՒՆ ՄԻՃՈՒԹԵՄԸ:

Այդ փառաւոր կտորից միայն երեք մնացորդներն են ազատուել, որոնք բարեբաղդաբար միմեանց հետ բաժնում են: Իմ նկարիչն այդ կտորները միացնելով, միասին է նկարել:

Այդ թիթեղն անաղոր կերպով զօրեղ է և տեղ տեղ կանաչ գեղեցիկ գոյնով ներկուած. գրա մի քանի մասերն աւելի կարմրաթուփ պղնձի գոյնով են և փայլուն: Այդ թիթեղը շատ լայն պէտք է եղած լինի. գրա լայնութիւնը կա-

րելի է 130. 5 համարել: Վերևի և ներքևի եզրի զարգա-  
րանքից մի քանի կարն և լայն մասեր են մեզ հասել:

Դրա վրայ նկատելի են մի ուլորուն և մի հասարակ  
զարգարանք. զրանք փոքրիկ շրջաններ ունին: Յետոյ գալիս  
է կարն, կոր և զօրեղ գծերով մի կապ: Բացի զրանից երե-  
ւում է անկիւնանի մի զարգարանք (համ. XIV) և  
վերջապէս ներսում էլի մի հասարակ հիւսուած զարգարանք:

Միջին կտորը հիւանայի, երեք մեծ և բաւականին վա-  
յելուչ թռչուններով մի տարածութիւն է կազմում. զրանք  
միմեանց վրայ և միևնոյն շարքումն են ներկայացրած: Դը-  
րանց տիպը նոյնպէս միևնոյնն է: Կարն և հաստ իրանին  
հետևում է զէպի վերև հետզհետէ բարսկանոզ վիզը, որի վը-  
րայ փոքրիկ, երկար և զէպի յետ կորացած գլուխն է գտըն-  
ւում: Այլքը փոքր, կլոր և ձուանէ է. իսկ կտուցն երկար,  
զօրեղ և սուր: Երկու կենդանիների կտուցներից երկար, հա-  
սարակ և ուռանման կամ որդանման թելեր են կախուած:

Երբորդ թռչունն իւր գլուխը կախել է. հարանական է  
նա սնունդ է փնտաւում: Դրա կտուցից թել չկայ կախուած:  
Բոյսրի սաները զօրեղ, ուղիղ և սաստիկ կոր ճիւղանների նը-  
ման են: Մէջքի վրայ կիսալուսնի ձևով խիտ փետուրներից  
բազկացած թևեր կան: Թևերի ներքևը ծպեղեայ խիտ զար-  
գարանքով է ծածկուած: Միւս երկու կենդանիները զրոից  
կարն գծերով են ծածկուած: Դրանց մէջքից սկսում են եր-  
կու ասելի երկար և լայն փետուրների կամարներ, որոնք կէ-  
տերով են ծածկուած: Դրանց ծայրերն ուղիղ կերպով կարուած  
են և կարն գծերից բազկացած փնջեր ունին:

Մրպիսի թռչուններ են զրանք: Ակնյայտնի է, որ զը-  
րանք գիշատիչ թռչուններ չեն, զրանց ասելի շուտ կարելի  
է զարգարանքի համար ծառայող թռչուններ ընդունել: Այդ  
թռչունների մի քանի մասերը մեզ սիրամարզին են յիշեց-  
նում, բայց ուղիղ ազին և թևերը զրան չեն բաժնում: Հընգ-  
կահաւերն (Indian cock) այս կենդանիներին նման չեն: Մնում  
է ֆասիանը, որի զանազան տեսակները հետու Ասիայում տա-  
րածուած են և որոնք իրանց փառաւոր զեղեցկութեամբ

Հին ժամանակներումն էլ մարդկանց ուշադրութիւնը գրաւած պէտք է լինին:

Այս թիթեղի վրայ ներկայացրած երևակայական կենդանիներից երկուսն այժնոջիւրների խմբին, իսկ մի երրորդն էլ — իհաների խմբին են պատկանում: Շատ կենդանիների մարմնի վերևի մասերը կտրել են և զրա համար մենք չենք կարող գրանց մասին մի հաստատ վճիռ կայացնել: Բարձր շեղանկիւններն երկու անգամն էլ իբրև տարածութիւն լրցնող իրեր են մացրուած: Յետոյ գալիս է աւազածամացոյցի նման մի պատկեր ևս:

ՆՈՐՈՐ XVII և XVIII (ՏԻՅՑ. IV ԵՎ ՔՆՈՒՆ ԳՆՆՈՒՄՆՈՐՄ):

Ինչպէս վերև լինեցինք, այս գեղեցիկ և մեծ մնացորդները պարուն Ն. Բէտուէրն է 1894 թ. յուլիսին Խոջալուի պոստի կայարանի մտա զանուղ մի կուրգանում գտել: Խոջալուն Անգրիկովկասի Գանձակ նահանգի Մուշի քաղաքից 22 վերստ հեռավորութեան վրայ է գտնուում: Մեր պատկերները նրա ինձ ուղարկած նկարների հիման վրայ են նկարուած: Մեր երկրում այդ առաջին դէպքն է, որ մի այլուած գերեզմանում այդպիսի մի գիււ և պատահում:

Այդ թիթեղն ըստ նկարի նշանութեան շատ լայն է, այսինքն 13<sup>սմ</sup>: Դա միևնոյն կարգով և շատ անգամ միևնոյն պատկերներով է ներկայացրած, որպէս առաջինը: Իւրաքանչիւր կողմի եզրից մի քիչ հեռու մի լայն զարգարանքի կապ կայ, որ մի կենդանական հիւսուած գծից է բազկացած: Նզրի զարգարանքի վրայ մի շարք դէպի ներս բացուած կիտաչրջաններ կան:

Միջին տարածութեան վրայ կաւուղ մի մարդ է պատկերացրած, որի հագուստը լաւ չէ կտրելի որոշել: Ըստ երևույթին այդ մարդը կատարեալ կերպով սպառազինուած է:

Այդ կախիւ նոյնպէս կապանծելի է: Այդ պատկերը մեզ վրայ այնպիսի տպաւորութիւն է թողնում, իբր թէ կենդանին այդ մարդուն զեանի վրայ է ձգել և մարդը զեանի վրայ ընկած իրեն պաշտպանում է: միւսուղ ձինն իւր առ-

զևի ոտի գորեղ ճիբանն այդ մարզու ճակատի վրայ է գրել: Կուռղ մարզն այդ կենդանու ոտին իւր ձախ ձեռքով զի մազբում է: Իսկ ալ ձեռքում զարնելու համար մի գանակ ունի, որ կենդանու զէպի գորեղ ճիբանն է ուղղամ:

Ձենք կարող նայնպէս սրոշել, թէ այդ մարզն սաղաւարդ կամ պաշտպանող գլխարկ ունի: Կարելի է կարծել, որ զա մի սաղաւարդ ունի: Մի բացուած բերանի շրթունքներն երկար և սուր կը լինէին: Բայց պէտք է կարծել, որ այդ երկու շրթանները, որոնք աչքերի կէտերի ապաւորութիւն են թողնում, ալ կողմից միմեանց վրայ են գրուած: Փոքրիկ շրթաններով լցուած մի ծալք, որ գլխի վրայ է ընկած և մի սաղաւարդի սանրի նման է, մարմնի վրայ չէ գտնուում: Կրա գլխի մի կողմը կոր գծերով բաժնուած է, որոնք սաղաւարդի առջևի սահմանն կարող են սրոշել:

Վիզը մի լայն և Յ հորիզոնական գծերից բաղկացած խաւով է շրջապատուած: Կրծքի վրայ կոր գծերով կապեր կան: Ստորին սրունքներն և սանրը բաւարովին փոքր շրջաններով են ծածկուած: Միայն ջիլերի և ոտի միջին մասի վրայ կապեր են նշանակուած: Ոտերի ծայրերը կէտանման բաներ են ցոյց տալիս: Կրա բանող մասերը ներկայացրած են, ձեռքերն երկար գծերով ծածկուած: Իսկ ալ ձեռքի և ուտի վրայ կապեր են նշանակուած: Ձախ ձեռքը մեծ մասամբ մարմնից բաժանուած է: այդ բաժանման գիծը պէտք է ձեռքի գոտու անց ընդունել:

Որքան էլ այդ բոլոր բաները նկարչի աւելորդարանութիւններին վերադրենք, բայց այնուամենայնիւ այդ պատկերը կեանքի և մահի համար մի կախ է ներկայացնում: Այդպէս էլ բանող ձին է, որ կատաղի կերպով այդ մարզու վրայ է յարձակում: Կրա ազին մէղքի վրայ կորացել և ամբողջ մարմինը գորեղ շարժողութեան մէջ է գտնուում:

Իսկ ինչ կենդանու մարմնի նկարի մանրամասնութիւններին է վերաբերում, զրա վրայ եզրի երէզ է գտնուում, որ մինչև ազին և սանրի հիմքերն է գնում: Փոքր վրայ մի շարք կոր կապեր են նշանակուած: Կրա իրանի ամբողջ սա-

բանութիւնը մի շարք գաշտերի է բաժանուած: Այդ կենդանին սպառազինուածի սպաւորութիւն է թողնուի: Մարդ այս գաշտերը նկատելով մեծ մասամբ Rhinoceres կենդանու զլխաւոր սպառազինութիւնն է լիշում: Բայց Հենց այս նշմանութիւնը մեզ համար զգուշութեան տեղ պէտք է ծառայի. այս նմանութիւնը սրառացի չպէտք է գերցնել: Ինչպէս տեսնուի ենք, նկարիչը շատ անգամ առանց որոշ դիտաւորութեան այնպիսի նկարներ է նկարում, որոնք բեախտական զէպքերին համասպասութեանում են:

Նրկարգ մնացորդը (Համ. XVIII) մեզ արդէն յայտնի մի եզ-նիւ գեղարուեստական պատկերներն է ներկայացնում: Այս կենդանիներից մէկը մեզ կատարեալ կերպով հասել է: Նրկու կենդանիներն էլ կուսելու գիրք են բռնել, գլուխներն ցած են ձգել և զօրեղ պոզերը զէպի առաջ ուղղել: Այդ կենդանիների մի քանի մասերը լրիւ, իսկ մի քանիսն էլ մասամբ փոխուած են մեզ հասել: Նրանց սուր աչքերը մեծ գնդերի նման են երևում: Կրկնակի շրթաններից բազկացած աչքերը մարդու նման միևնոյն կողմում և միմեանց վրայ են զանուում: Դրանց հաստ գունչը կէտերով և թարս ետանկիւնով են ծածկուած, որ իւր գրութեամբ մի զեղարուեստական ասամնաշար է անցկացրած: Սմբակների ներքանն ուղիղ է: Նրկար, զօրեղ և շրթաններով ծածկուած ագին զէպի ցած է ընկած և զբա ներքևի մասն ուղիղ կտրուած է: Դրանց մարմնի իրանը բացի եզրի երէզից այնպիսի տարածութիւններ ունի, որոնք երբեմն կոր գծերով և երբեմն էլ բաց կիսաշրթաններով են լցուած: Այդ ցատկոզ կենդանիների ամբողջ տեսքը շատ բնական է:

Բացի դրանից այդ թիթեզի կառքի վրայ մենք տեսնում ենք մի շարք տարածութիւն լցնող զարդարանքներ, որոնցից ոմանք բոլորովին նոր ձևով են: Մի տեղ եզրի զարդարանքի տակ մի բարձր, ետանկիւնանի և սուր գուրս ցցուած մաս էլ է երևում, որ արտաքին կողմից կոր գծերից բազկացած երեզակով է ծածկուած, իսկ ներքուստ և զուգահեռական տարածութիւններով, որոնց վրայ բաց կիսաշրթաններ և ներկա-

յացրած: Մի ուրիշ տեղ էլ կհազնդա՞նն մի գուրս ցցուած մաս կայ, որ կենդրոնական գծերով է ծածկուած: Այլ ձիւց առաջ, եղջիւրներէն ներքեւ 7 եռանկիւնիներով և կէտուար գուրս ցցուած մասերով մի սասղ (Համ. III) կայ, որ նայնպէս կենդրոնական ուղարուն գծով լցուած է: Այդ միւնայն տեղում ձախ ձիւռ առաջ մի պատկեր է գտնուում, որ ընդհանրապէս բարձր ու և երկար զից ունեցող մի թռչունի նման է:

Ամէն կողմից այս գիւտը շատ նշանաւոր է, որ պ. Բէտտլերը Խոջալուումն է արել: Ներկայ ուսումնասիրութեանս Համար այդ գիւտը մեծ արժէք ունի: Դրա Համար ես այդ եռանդուն Հնարայգին խորին շնորհակալութիւնս եմ յայտնում:

Այս տարի ապրիլի 27-ին ինձ արժէք ունեցող մի նշանաւոր գիւտի մասին էլ է տեղեկութիւն տուել: Այս գիւտը զարգարուն սսկէ թիթեղից շինուած Արջաձորի փռնակն է: Այս բանն առաջ լինուած Կուշու Արջաձոր գիւղի մի կուրգանումն գտնուեցաւ, որ քարէ արկղ չուներ: Որքան ես Հասկանում եմ այդ սսկէ թիթեղից շինուած մի ծակուած իր է, որի վրայ մի շարք կենդանիների պատկերներ են ներկայացրած: Պարուն Բէտտլերն զբանց յամոյրների, շների և ձիւնման կենդանիների է նմանեցնում:

Այս փռնակն իւր զարգարանքի Համեմատ ասորական գրւանի ձևով է շինուած երևում: Բայց զբա վրայ գտնուող ներկայացումներն այդ բանի Հետ չեն Համապատասխանում:

Հայկական բարձրաւանդակի արևելեան մասի գերեզմանագառներէ զարգարուն գտնէ թիթեղների վերայիչեալ նկարազրութիւնից լեռայ մի Հայեացք էլ արևմտեան խճրին պատկանող գիւտերի տեղերի վրայ ձգենք, որոնք ի գէմս պարուն զը Մորգանի մի գերեզմանց ուսումնասիրող են գտել:

Իւր տեղեկութեան Համեմատ զը Մորգանն այդպիսի գտնէ թիթեղներ գտաւ Ախթալայում, Սաղապլայում և Սու-

սիրելում: Իրանց Հնութեան Համեմատ նա այդ թիթեղներն երեք խմբերի է բաժանում: Իրանցից ամենանորերն աւելի գեղեցիկ և շատ են զարգարուած և միննոյն ժամանակ շատ լայն (մինչև 10 սանտ. բարձրութեամբ): Այդ տեսակից նա Ախթալայում և Մուսիերիում 4 հաս գտաւ: Ամենահին գօտիներն աւելի քիչ են լայն, հասա և զարգարուած: Այդ տեսակին են պատկանում Ախթալայի վերոյիշեալ գօտիները: Մուսիերիի մի հին գերեզմանում նա մի հասարակ և զարգարուած գօտի գտաւ: Նա մի քանի անգամ այնպիսի գօտիների պատահեց, որոնք մարդկային պատկերներով էին զարգարուած:

Ա. Ախթալայում կենդանու գլխով մի մարդ, որ մի կառքի վրայ կանգնած է. այդ կառքի վրայ երկու ձիեր կան լծած: Այդ նկարը շատ կուպիտ է: Իրա բոլոր առանձին մասերի մէջ միութիւն չկայ: Այդ կառքի երկու կողքերում չորս շառաւիղից բազկացած փոքրիկ անիւներ են գտնուում: Լաւ չէ երևում, թէ այդ մարդն ո՞ւր է կանգնած: Զիւների գրութիւնը լաւ չէ ներկայացրուած: Իրանք սմբակներ չունին և գրանց երկար ձգուած գլուխը խոզի գլուխն է լիշեցնում: Արտիշեալ եղբակացութեան համար իբրև արացոց ծառայում է կարն և սուր ազին: Մարմինը ծպեղեալ կուպիտ զարգարանքով ծածկուած է. նրանց գլուխն, ականջները, սաներն և ազին հասարակ կէտերով են ծածկուած: Աւելի երեխայական է մարդու ներկայացումը: Կենդանիների բերանը լայն բացուած, իսկ ականջները սուր են: Այդ մարդու հագուստը քսակի նման է, որ գրա ամբողջ մարմինը՝ գլխից մինչև սաները ծածկում է. այդ հագուստը կովկասեան այսօրուայ առատաօքն է լիշեցնում: Այդ հագուստը նոյնպէս ծպեղեալ զարգարանքով ծածկուած է: Կլոր գլխից լիտայ սկիւռում է գրա երկար և գէպի վերև ծառած գունչը, որ կէտերով ծածկուած է: Նա բարակ աջ ձեռքը տարածել և սկուտեղի ձևով մի կլոր բան է բռնել, որի մակերևոյթը կէտաւար ոչորուն գծով է զարգարուած: Մի բան, որ շատ պարզ կարելի է նկատել, այդ կառքն է. գլու երկու զլխուստը լա-

սերը նկատելի են: Այդ կառքը մասամբ իրրև գեղեցիկ, երկար և զօրեղ բան է ներկայացրած: Պարոն զը Մարգանն այս և ասորական կառքերի մէջ նմանութիւն է փնտաւում: Բացենի մօտ գտնուող լեռնային երկրներում մինչև այսօր էլ այնպիսի կառքեր կան, որոնք այդ կառքին նման են:

Յետոյ, որքան ես հասկանում եմ, այդ միևնոյն գօտէ թիթեղի վրայ ներկայացրած է նայնպէս մի ազգեզնաւոր, որ բարայմների մի խումբ է հայտնում:

Բ. Այդ մարզն ազեղ և նեա ունի. այդ թիթեղը Լեչ վարի Մուսիերի տեղումն են գտել: Այդ ազեղը մարզկալին պատկերի մեծութիւն ունի: Դրա միջին մասում ողակաձև մի բան կայ, որ ձեռքի և նետի տեղն է ցայց տայի: Լարը մի ուղիղ և ձգուած գծով է նշանակուած: Յետոյ 3 երկար նետեր են գրուած, որոնց երկար և կրկնաճակ ունեցող ծայրերը գէպի գետինն են ուղղուած: Այդ մարզը ծովային շան մի գլուխ ունի. զրա աչքերը միմեանց տակ և միևնոյն կողմումն են գտնուում. նա բաց բերան և ուղիղ կտրուած ու հաստ չրթունքներ ունի: Այդ մարզը բիթ չունի: Նրա գլուխը հաստ և կարճ վզի վրայ է գտնուում: Կէտաւոր զծերի շարքերով և ծպեղեայ զարգարանքով այդ մարզու մարմինը ծածկուած է: Նրա ձեռքերն երկար և գէպի գետինն են ձգուած: Նրա շատ հաստ վերին սրունքները բարձր են ներկայացրած և արտաքին ու ներքին կողմերում կէտաւոր զծեր են նշանակուած, որոնք մի կէտաւոր և օձաձև գծով են բաժանուած: Ստաբին սրունքները բարակ և սաների մօտ կէտերով են ծածկուած: Սաները կուպիտ, մասները լայն, իսկ կրունկները սուր են ներկայացրած:

Գ. Աբթալայի որսորդական մի տեսարան: Այտեղ մենք տեսնում ենք երկու, միմեանց բազորովին նման մարզիկ, որոնք մի տեսակ շան գլուխներ ունին: Դրանց սուր և փակ բերանն որսորդական շուն է լինեցնում: Դրանք միայն իրանց սաների նիբանանման կազմութեամբ են տարբերուում: Մի մարզ այնպիսի ազեղ ունի, որպիսին մենք վերևումն ենք նկարագրել: Արշահեաւ այդ գօտին կտրած է, զրա համար մենք

չենք կարող զրա վրայ ներկայացրած ամբողջ տեսարանը հասկանալ: Առաջին մարզու յետևում երկու կենդանիների մարմնի առաջին մասերն են երևում, որոնց մեծ, զորեղ պոզերն և երկարաձիգ զլուխներն Կալաքենցի Թիթեղիների եղևիաներին են նմանում: Այդ մարզու առաջ մի եղջերու թույլ կերպով շարժուած է: Դրա եղջիւրի լայն ճիւղերը մտասմբ Կալաքենցի եղջերուների եղջիւրների ճիւղերին են մտանում. միայն այստեղ ճիւղերը կոր և վերջում աւելի բուխ են: Այդ եղջերուի մտա մի աւելի փոքր կենդանի է գտնուած, որ կոր և կորն պող ունի. պ. գը Մարգանն այդ կենդանուն մի վայրի այն է համարում. բայց գուցէ աւելի ուզիլ լինի գըրան վտա նկարան այնեղջիւրի տեղ ընդունել:

Որքան էլ այդ գտնուած իրերը հետաքրքիր լինին, բայց այնուամենայնիւ գրանք գեղարուեստական տեսակէտից Կալաքենցի, մանաւանդ Թոշալուի իրերից յետ են մնում: Դրանք գտնագան տեղերի գեղարուեստի մեծ տարբերութիւնները շատ պարզ կերպով ցոյց են առլիս, թէ և այդ պատկերների ամբողջութիւնը կարող է միևնայն կազմապարների համեմատ ներկայացրուած լինել: Այդ բանն պ. գը Մարգանի գտնագան կենդանիների պատկերների հաւաքածուից է երևում: Թիթեղի վրայ երեք զլխաւոր շարքերով են գտաւարուած: Ուշերը ստատիկ կոր և գէպի առաջ ուղղան պոզեր ունին: Ոչ այս զարգարանքն և ոչ էլ կենդանիների այդպիսի պատկերներ ես Անգր-Կովկասում չեմ գտել: Մի ուրիշ վահանի մեզ հասած մնացորդի վրայ կենդանիներն աւելի մեծ գիբքով են ներկայացրած և գուցէ գրանք էլի ծուռ պոզերով վայրենի եղներ կամ առիւծներ լինեն: Բայց մենք այստեղ հիւսուած զարգարանքին ենք պատահում: Բացի գրանից այդտեղ մի թիւաւոր նմուշ էլ է գտնուած (Մ. Ա. 776), որ մի աթոռի յետարանի վրայ ամբարցրած է եղել: Այդ պատկերը մեծ կիսաշրջաններով ծածկուած է:—Բրանցից պատրաստուած մի ներքինու արձան գօտի լուծի, ալլ մի երկար և քտակի ձևով հագուստ, որ գծերով ծածկուած է:

Թուփրակ-Քալէն սահմանի մէջն է գտնուած, մինչև որ-

տեղ հարաւից սեպանն գիրը հասնում էր: Մենք գիտենք, որ Ռուզաթ թագաւորը Ք. ծ. ա. 714 թ. է մեռել: Վանայ երկրում այն ժամանակ զեղարուեստն ասորական էր: Դրանից ուզում եմ եզրակացնել, որ հայկական զեղարուեստն (այսինքն այն երկրի զեղարուեստը, որ բարձր Հայքին է պատկանում) աւելի հին է, քան Վանայ երկրինը: Եթէ մի անգամ հայկական զեղարուեստի մէջ սեպանն գիրն և ասորական սնի տիպական պատկերները մտած լինէին, այն ժամանակ գրանք գոտարութեամբ կրկին անհետացած կը լինէին: Այն ժամանակը, երբ Միջագետքի զեղարուեստը բարձր հայկական զեղարուեստից բաժանուած էր, շատ հին է:

Եթէ մէկն ամենահին գլանների (Cylinder) հարուստ ժողովածուն տեսնում է, այն ժամանակ մտրդ նշանաւոր տալիաների հետ է ծանօթանում: Այդ ժողովածուի պատկերները պարն Մընանն <sup>1)</sup> (Menant) է նկարել: Այդտեղ նայալէս կրկնակի բնասրութեամբ երևակայական էակներ կան: Դրանցից թէ իւր հնութեամբ և թէ զարհուրելի կերպարանքով մի յլամարգ (Jadubar) է նշանաւոր: Այդտեղ կան նայալէս այնպիսի ցուլեր, որոնք Primigenius—կենդանու նման զօրեղ պոզեր ունին, ինչպէս մեր եղ-ձիաները: Այնտեղ գրանում ենք լուսին և մի մեծ աստղ, որ մեզ III և XVIII համարներում պատահեց: Զնայելով, որ եզրի զարգարանքներն այնտեղ բացակայում են, բայց գրա փոխարէն մենք մի քանի անգամ հիւսուած զարգարանքի մնացորդների ենք հանդիպում: Բայց գրանք disjecta membra են, որոնք մի ընդհանուր արմատի վրայ են մտանցոյց անում և հիւսիսային զեղարուեստական գործերի հետ ունեցած մօտ յարաբերութիւնը չեն մտանում: Այն նաստրալիտական ներկայացումն, որ մենք հին հայկական կենդանիների խմբերում և կախներում տեսնում ենք, այստեղ բոլորովին բացակայում է: Բաւական է համեմատել Հանքատի արձանի վրայ գտնուած պատկերը կամ Բաղզատի տարածութիւնների բաժանուած

<sup>1)</sup> Joachim Menant, Recherches sur la glyptique originaire. Pl. I. Cylindres de la Chaldée. Paris 1883.

կոթողը: Այնտեղ կան զանազան շորքատանիներ, օձեր և այլն. մենք կարող ենք այդ կենդանիների գիտնոջան անել: Դրանց կերպարանքն անբնական է: Դրանք մի ընդհանուր զարծուցութիւն չեն կատարում, որպէս զի գրանց պատկերը մեզ վրայ մի տեսարանի ապաւորութիւն թողնի:

Դրանցից մանաւանդ նշանուոր են գիշատիչ թաչունները (բողկներ և շահէններ), որոնցից Կալաքենդի պատկերները ներկայացուցիչներ չունին: Միւս կողմից չպէտք է կասկածել, որ այս բոլոր շորքատանիները՝ թաչուններն և օձերը անզական կենդանիներ են: Կալաքենդի կենդանիների պատկերներն աւելի պարզ ճաշակ և մի անհաւասար մեծ արուեստագիտական հաստատութիւն են ցոյց տալիս, չնայած, որ երևակայական կենդանիների հնարումն գեղարուեստագիտական կատարելագործութեան մի կողմն է ցոյց տալիս, որ ինչպէս երևում է, արևմտեան գերեզմանադաշտերում բացակայում է: Կարելի է ընդունել, որ Կալաքենդի և Մուշու մտերքում մետադային արուեստի կենդրոններն են գոյութիւն ունեցել, որ մինչև այժմ ոչ մի տեղ չէ երևացել:

Արևելքի մօտ և հեռու երկրների ուրիշ գիւտերի հետ համեմատութիւնը, Անգր-Պոփասի կուլտուրայի հետ ունեցած ուզղակի յարաբերութիւնը ցոյց չեն տալիս: Պէտք է աչքի առաջ ունենալ, որ վերոյիշեալ գիւտերը մեծ մասամբ մարդկային զարգարանքին են պատկանում. գրանք մեծ մասամբ գօտիներ են: Բայց ուրիշ աւելի փոքրիկ իրեր գուցէ վերոյիշեալ կուլտուրայի հետ ունեցած յարաբերութիւնն ապագայում ապացուցանեն: Արևելքում հին ժամանակ մետաղային գօտիներ չստ են գործածել, բայց իմ կարծիքով այգալիսի կենդանիներ և մարդիկ, որոնք վերոյիշեալ թիթեղների վրայ են ներկայացրած, ոչ մի տեղ չէ երևացել: Ասորական բըլիէֆների վրայ մի քանի տեսակ գօտէ զարգարանքներ են նկատոււմ, բայց գրանց երկրաչափական և հա-

տարակ օրնամենաները մերոնց հետ ամենևին չեն համապատասխանում: Միևնոյն տեսակ մի հակասութիւն, որ ես հիւսիսային և հարաւային Կովկասի համար ապացուցեցի, աւելի զեպի հարաւ ընկած հետու երկրների համար էլ կարելի է տեսլ:

Հէնց Թուրանի-Քալէի հետևեալ յայտնի զիւտը կտրուկ հակասութիւնն է ցոյց տալիս: 1879 թ. անգղիական հիւպատոս Կլէյտոնը (Clayton) Վանի ծոռ գանւոց տեղերում պեղումներ կատարեց, որոնց արդիւնքները զժրադրաբար աշխարհէս ամեն կողմերումն են ցրուել: Դրանցից մի փոքր ժամն էլ մեր թագաւորական թանգարանն է ստացել: Դրանց մէջ բրոնզից պատրաստուած մի լու, երկտը և յայն գօտէ թիթեղ կայ, որոնց ծայրերն ուղղանկիւնանի կերպով կըտրուած են: Դրա եզրի երկարութեամբ մի շաբա ծակեր են գանուում, որոնք այդ թիթեղը կաշուի կամ մի որ և է հիւսուած բանի հետ կպցնելու համար էին սրոշուած: Այդ թիթեղի մակերևայթը զանազան տեսակ զարդարանքներով ծածկուած է: Դրա յօրինուածութիւնը Կարաքեմէզի թիթեղներին նմանում է, բայց գրանց վրայ ներկայացրած երեզները միմեանցից բոլորովին տարբերում են:

Նոյնպէս մեզ մեծ հետաքրքրութիւն են պատճառում և այն զիւտերը, որոնք թագաւորական թանգարանն այնտեղից է ստացել: Այդ զիւտերը ցոյց են տալիս, որ այդ գեղարուեստն Ասորեստանի գեղարուեստի հետ յարաբերութիւն է ունեցել, իսկ հիւսիսային Հայաստանի հետ բոլորովին ոչ: Դրանց մէջ մի վահանի մեծ մնացորդն է մեզ հասել, որ Ռուզաս թագաւորը Խալցիս աստուծուն է նուիրել: այդ վահանը ցուրրի և առիւծների պատկերներով զարդարուած է: 1890 թուի գեկամեճերին պ. Միլլի-Հէոֆերն ուշագրութիւնս դարձրեց պ. Սաղոմոն Բէյնախի մի յօգուածի վրայ, որի մէջ նկարագրած էր կիպրոսեան այն անօթը, որ պ. Սեեֆալը—Բիթաւերը Թամաստումն է պեղել: Այդ անօթի վրայ սրսորդական մի տեսարան է ներկայացրած և բացի դրանից մի աղեղնաւոր, որ Կորանի աղեղնաւորներին շատ

նման է: Այդ անօթի բաղաւոր գանոցը գրա պատկերն է նկարել <sup>1)</sup>: Դրանից երևում է, որ անօթի ունկները Primigenius գորեղ կենդանու պոզերն են ներկայացնում: Այդ անօթի վրայ մի եղջերու էլ է պատկերացրած, որ թփանման եղջիւրներ և մի գշտայի կերպարանք ունի:

Մեր ուշագրութիւնը նոյնպէս զարձնում ենք Ոլիմպոսի Ալթիսի արխայական մետաղից պատրաստած մի բրդէֆէ <sup>2)</sup> վրայ, որի մասին պ. Կուրցիուսն ասում է. «Այդ պարզ ցոյց է առիս, որ Հելլենների ինչպէս կուանկարչութիւնը (Thonmalerei), այնպէս էլ բրդէֆ-գեղարուեստը մի ժամանակ բարեւոտարական զարգագիտութիւնից (Ornamentik) ազդուել է: Նա նոյնպէս յայտնում է, որ կենդանիները կատարեալ որոշմամբ և մեծ վարպետութեամբ են ներկայացրած, . . . իսկ քնդհակառակն մարդկային կերպարանքները բութ և ոչ ճարպիկ կերպով. այստեղ նկարագրական գեղարուեստը զեռի սկզբնական շրջանումն է գտնուում: Այդ վերաբերում է բուրբոսի մեր գտէ թիթեղներին, որոնք իրանց մնացած կէտերում ոլիմպիական մետաղային բրդէֆէ հետ ուղղակի յարաբերութիւն չեն ցոյց առիս: Այդ միևնույն աշխատութեան մէջ Աթէնքի Դիփիւլոսի հին գերեզմաններում գրանուած սոկէ երէզների պատկերներն էլ կան, որոնց վրայ կենդանիների այնպիսի շարքեր կան ներկայացրած, որոնք մեզ արևելեան կաղապարներն են լիչեցնում: Այդ կենդանիների մէջ այնպիսի եղջերուներ էլ կան, որոնց եղջիւրներն երկու ճիւղի են բաժանուած: Դրանց մէջ սրտազական շներ էլ են նկատուած: Բայց այդ կենդանիների մանրամասնութիւնները չենք կարող պարզ հասկանալ: Ոլիմպիայի կենդանիների պատկերներով միւս բրոնզէ բրդէֆէներն երեխայական աշխատութիւններ են. միայն գրանց եզրի զարգարանքը, մանաւանդ հիւսուած աշխատութիւնը հին հսկական գիւտերի նրբութեանը մտանում է: Բայց հելլենական բրդէֆէներից մի քանիսի վրայ ներկայացրած մարդկային ֆիգուր-

<sup>1)</sup> Max Ohnesfalsch—Richter, Kypros. Berlin 1893.

<sup>2)</sup> E. Curtius, Das archaische Bronzerelief aus Olympia, Berlin 1880.

ները գովելի ճշտութեամբ են: Այս օրինակները բաւական են մեզ համոզելու, որ ամենահին ժամանակի պլատոնիական գեղարացիայի մի քանի ուղղութիւններն և կազապարներն արևելեան կազապարների վրայ են ժառանգացոյց անուս: Որքան ինչ յայտնի է, որանցից ոչ մէկը հին հայկական գիւտերի հետ նմանութիւն չունի:

Վովկասի մասին բոլոր ամանութիւններն մեզ հիմք են տալիս կարծելու, որ այն անգերուս, որոնց մասին մենք այնտառութեանս սկզբներում խօսեցինք, մետաղային հին և հարուստ ինչուսաբան զարգացած է եղել: Գուցէ այդ բանի համար իբրև շոշափելի ապացոյցներ ծառայում են բրոնզէ այն գօտիները, որոնք այդ անգերուսն են գտնուել: Մի անգամ մի լարմար առթով ես Աւրուպայի մետաղային գօտիների մասին խօսել եմ: Այն ժամանակ ես Վովկասից միայն Վորանի գօտիների հետ էի ծանօթ, որոնց միայն փականքներն էին պատկերներով զարդարուած, իսկ այդ թիթեղների միւս մասերն կէտերով էին ծածկուած: Եւ վճռեցի, որ ուր-իսկ է մի քանի գիտնականների այն կարծիքն, իբր թէ Գերմանիան և արևմուտքն իրանց կազապարները Վովկասից են ստացել և բացի զրանից իբր թէ այն ժամանակ Իտալիայի և Վոլքիսի մէջ յարաբերութիւն է գոյութիւն ունեցել: Այժմ այդ տարբերութիւնն այնքան էլ մեծ չէ: Երբ Անգլ-Վովկասում փառաւոր զարդարուած և մարդկանց ու կենդանիների պատկերներով մի շարք գօտե թիթեղներ գտնուեցան, այն ժամանակ ձևական հակասութիւնն կամ տարբերութիւնն անյայտացաւ: Այժմ այդ տարբերութիւնը միայն գոյութիւն ունի պատկերների կազմութեան մէջ: Այդ տարբերութիւնն Աւրուպայի համար այնքան մեծ է, որքան Բարելոնի և Ասորեստանի մէջ եղած տարբերութիւնը: Բայց այս տարբերութիւնը միայն անգլական զարգացողութեան անկախութիւնն է ցոյց տալիս: Դա զանազան կուլտուրաների մի ընդհանուր հոսանքից բխած լինելն է ապացուցանում և մեզ ստիպում է ընդունելու, որ այդ բոլոր ժառանգոր աղբիւրները մի ընդհանուր նախնական աղբիւրից են ծագում:

Մարգրիկ Կովկասում զանազան նպատակներով շատ անօթներ են գործածել, որոնք կամ մետաղից կամ կաւից են պատրաստուած եղել: Ամենից առաջ լինենք վահանները, պատեանները, իսկ յետոյ ամաններն և կփերը, որոնք արխայական ժամանակից մինչև երկաթէ շրջանը գործածական էին: Դրանք Միջագետքից մինչև Սիրիա, Կիպրոս, Յունաստան և Իտալիա տարածուած էին: Դրանց արեւմտեան ամենարարը զարգացումը Հալլատեան ժամանակումն է եղել և զրանք մեր Հիւսիսումն էլ են երևում: Այդ անօթները գեղարուեստով տազորուած արհեստաւորների հասարակ գիւտերը չեն: Միջագետքի տիպերը գոյութիւն ունէին և հետաւոր երկրներում: Դրանց վրայ թեւաւոր նժոյգներ, առիւծներ և բացի զրանցից նոյնպէս ծառեր ու ընտանեկան և հասարակական կեանքի տեսարաններ կան ներկայացրած: Մեր բրոնզների վրայ կենդանիները ծառազուրկ անգերում և կենդանի կերպով են պատկերացրած: Գեղարուեստագէտների երևակայութիւնը նոյնպէս ուրիշ տեսակ է: Մեր բրոնզների վրայ աստուածներ, հրեշաւոր գեւեր և քերովբէներ չկան ներկայացրած: Այստեղ նժոյգը թեւեր չունի, իսկ առիւծն ոչ իւր բնական կերպարանքովն է և ոչ էլ իրրե թեւաւոր կենդանի: Այստեղի բնիկ որսորդն իւր բնական գրութեան մէջ է, այսինքն մի շարք վայրենիներով շրջապատուած որ մինչև այժմս էլ արեւելեան Աֆրիկայի անապատների որսորդներին է յատուկ: Բայց Անգր-Կովկասի կենդանիների այս տիպերն ասորական և բարբելական անօթների վրայ չեն երևում, իսկ զրանց արեւմտեան Ասիայի անօթների վրայ չէ կարելի նոնաչել: Կուլտուրական այն մեծ հոտանքի ազդիւրը չէ կարող հարուային Կովկասում կամ հայկական բարձրաւանգակում եղան լինել: Բայց կարելի է ընդունել, որ այդ հոտանքն այս երկրից նոր գտակներ է ընդունել իւր մէջ:

Թէ հին հայկական կամ աւելի լու է տակ, Հիւսիսային Խաչքիական ինքուստրիան ինչ տեղ է բռնում, մինչև անգամ այսօր էլ գեւ չէ կարելի որոշել: Որովհետև մեզ պատմական կամ լեզուազիտական միջոցները պակասում են,

գրա համար մեր յայտ հնագիտական գերեզմանագիւտերի վրայ է գրուած: Բայց սրանց մասին մենք կարող ենք ճիշտ գաղափար կազմել միայն այն ժամանակ, երբ Պարսկաստանի և սրանից աւելի արևելք գտնուող հուշարարական երկրների նախնական պատմութեան հետ ծանօթանանք: Մինչև այժմ մեզ համար գեւ նիւթեր են պահասոււ: Բայց մինչև այժմ մեզ լայանի այդ կենդանիների կենդանարանական ուսումնա- սիրութիւնը կարող է մի այնպիսի ուղղութիւն լառաբ ըն- ընել, որ կը նպաստի այդ երկրի հուշարարական պատմութեան մասին ճիշտ գաղափար կազմելու: Այդ երկրում, որի հետ մի շարք աւանդութիւններ են կապուած, հին ժամանակ մի զարգացած և անկախ կերպով կառարելագործուած մեա- ղային ինքուստրիա է գոյութիւն ունեցել:

(Գերմաներէնից) Լ. ԱՄԱՍՅԱՆՍԵՆ.



